20 ՄԱՅԻՍ 2011 ՈՒՐԲԱԹ 91(4710)

# Ազգ
Azg

ISSN 1829-1651

# ԼՂՀ ԱԺ խմբակցությունների համատեղ հայտարարությունը

ԼՂՀ Ազգային ժողովի խմբակցությունները երեկվա նիստում հանդես են եկել համատեղ հայտարարությամբ, որում մասնավորապես նշվում է. «Լրացավ ղարաբաղա-ադրբեջանական հակամարտության գոտում զինադադարի 17 տարին: Ցավոք, ադրբեջանական կողմը հերթական անգամ փորձ արեց ննգափոխել իրողությունը եւ կասկածի տակ առնել իրավական ուժ ունեցող պայմանավորվածության իսկությունը:

Քարոզչական այդ ձեռնարկումը ուղեկցվեց շփման գծում լարվածությամբ, որի հետեւանքով արձանագրվեց ԼՂՀ խաղաղ բնակչի՝ դիպուկահար կրակոցով սպանության փաստ:

Մենք ափսոսում ենք, որ ադրբեջանական կողմի ոտնձգությունները անհրաժեշտ եւ անհետաձգելի հակազդեցության չեն արժանանում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության կողմից, որը կոչված է միջնորդություն իրականացնել հակամարտության բոլոր կողմերի միջեւ՝ հասնելու վերջնական խաղաղության:

Մեզ համար գնալով ակնհայտ է դառնում, որ ադրբեջանական իշխանությունները պատրաստ չեն վիճելի հարցերը խաղաղ բանակցությունների միջոցով կարգավորելու եւ ամեն ինչ անում են, որ իրավիճակն ավելի սրվի:

ԼՂՀ ԱԺ քաղաքական ուժերը լիովին պաշտպանում են հակառակորդի սադրանքներին համարժեք պատասխան տալու ուղղությամբ ձեռնարկվող քայլերը: Մենք Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպության Մինսկի խմբի համանախագահներին հորդորում ենք իրենց միջնորդական մանդատը կիրառել ամբողջ ծավալով՝ զսպելու Ադրբեջանի ռազմատենչ գործողությունները, հակառակ դեպքում իրավիճակի հնարավոր սրման համար պատասխանատվությունը կծանրանա նաեւ միջնորդների վրա»:

# «Իրավիճակի ինչ-ինչ զարգացումները մեր հայ գործընկերները ընկալում են որպես իրենց ուղղված վտանգ»

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

**ՀՀ նախագահի՝ ներկաներին ուղղված ուղերձով երեկ բացվեց Երեւանում մեկնարկած ՀՀ ՊՆ Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի, ՀԱՊԿ քարտուղարության եւ ՀԱՊԿ հետազոտական ինստիտուտի նախաձեռնությամբ կազմակերպված «Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունն ու Հարավային Կովկասը. տարածաշրջանի խաղաղության եւ անվտանգության հեռանկարները» թեմայով միջազգային երկօրյա խորհրդաժողովը: Աշխատանքներին մասնակցում են ՀՀ ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանը, պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորդյուժան, ՀԱՊԿ անդամ պետությունների հետազոտական, քաղաքական-վերլուծական կենտրոնների ղեկավարներ եւ փորձագետներ:**



**Ինչպես նկատեց ԵԱՀԿ Մինսկի խմբի ռուսաստանցի նախկին համանախագահ Վլադիմիր Կազիմիրովը. «Երեւանում էլ ինչի՞ մասին պետք է խոսենք. իհարկե՝ Ղարաբաղի»: Երեկվա զեկուցողների հիմնական թեման իսկապես հենց ԼՂ հիմնահարցն էր, դրա ներկա վիճակը, հնարավոր զարգացումները, եւ հատկապես պատերազմական զարգացումների պարագայում ՀԱՊԿ-ի կատարելիք դերը:**

**Նախ ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, ընդգծելով, որ «Հայաստանը հատուկ շահագրգռված է տարածաշրջանում անվտանգությունը պահպանելու գործում», կարեւորեց, որ ՀԱՊԿ-ում հենց մեր երկրի նախագահության օրոք որոշում կայացվեց ստեղծել արագ արձագանքման զորքերը, որոնք պետք է ռազմական օգնություն տրամադրեն ՀԱՊԿ անդամ այն երկրին, որը ենթարկվել է հարձակման կազմակերպության ոչ անդամ այլ երկրի կողմից: Դաշնակից երկրների առջեւ բարձրաձայնելով, որ Ադրբեջանը շարունակում է իր անթույլատրելի չափերի հասնող սպառազինումն ու ռազմական հռետորաբանությունը՝ նախարար Օհանյանը ընդգծեց, որ «Հայաստանը խիստ կարեւորում է իր դիրքորոշման ընկալումը՝ ՀԱՊԿ-ում գործընկեր պետությունների կողմից». «ԼՂ-ի վրա Ադրբեջանի հարձակման պարագայում Հայաստանը ստիպված է լինելու միջամտել, քանի որ մենք ԼՂ անվտանգության երաշխավորն ենք:**

*Տես էջ 3*

# Ժամանակն է...

Միացյալ Նահանգները մեծապես հավատում է, որ «Ժամանակը եկել է վերջնական համաձայնեցնելու եւ հաստատելու հիմնարար սկզբունքները եւ անցնելու խաղաղ համաձայնագրի մշակմանը», Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի եվրոպական հարցերով ենթահանձնաժողովի առջեւ մայիսի 18-ին հայտարարել է ԱՄՆ-ի պետքարտուղարի օգնական Ֆիլիպ Գորդոնը՝ ներկայացնելով ԱՄՆ-ի առաջնահերթությունները Եվրոպայում:

Կովկասի առնչությամբ Գորդոնը նախ ընդգծել է, որ ԱՄՆ-ի ջանքերը ԵՄ եւ այլ միջազգային գործընկերների հետ առաջընթաց են գրանցել, թեեւ տարածքային վեճերն ու քաղաքական ու տնտեսական բարեփոխումների անհրաժեշտությունը մնում են լուրջ խնդիրներ առավել կայուն տարածաշրջան ունենալու համար: «Մեր հաստատուն ներգրավվածությունն ու զգալի աջակցությունը Վրաստանում նպաստել են Վրաստանի տրանսֆորմացմանը առավել ձգտելով ժողովրդավարության եւ որպես ՆԱՏՕ-ի կարեւոր գործընկեր Աֆղանստանում», հայտարարել է Գորդոնը, ավելացնելով, որ ԱՄՆ-ը իր եվրոպական գործընկերների հետ կշարունակի աջակցությունը «Վրաստանի տարածքային ամբողջականությանն ու ինքնիշխանությանը վերջինիս միջազգայնորեն ճանաչված սահմաններում եւ կշարունակի աջակցել միջազգային ջանքերին՝ գտնելու խաղաղ կարգավորում Աբխազիայի եւ Հարավային Օսիայի առնչությամբ վեճերում»:

Միացյալ Նահանգներն, ըստ Գորդոնի, կշարունակի խրախուսել «Հայաստանի եւ Թուրքիայի հարաբերությունների նորմալացումը», նաեւ կավելացնի իր ներգրավվածությունը Մինսկի խմբում: «Միացյալ Նահանգներն ու Եվրոպան պետք է միասին աշխատեն՝ խուսափելու հետագա բախումներից Եվրոպայում եւ օգնելու տարածաշրջանի երկրներին շարժվել ժողովրդավարության, խաղաղության եւ առավել բարգավաճ ապրելու ուղղությամբ», հայտարարել է Գորդոնը, ակնհայտորեն մոռանալով ԱՄՆ-ի նավթային շահերի՝ ժողովրդավարության ու դրա նման գեղեցիկ այլ հասկացությունների նկատմամբ գերակայություն ունենալու մասին:

Գորդոնը նաեւ անդրադարձել է ԱՄՆ-ի այլ հետաքրքրություններին, մասնավորապես ԱՄՆ-ի ներկայիս վարչակազմի առաջնահերթությունները խմբավորելով երեք խնդիրների համատեքստում՝ գլոբալ համատեքստում ԱՄՆ-Եվրոպա համագործակցություն, Եվրոպայի հետ Եվրոպայի մասին գործակցություն, ԱՄՆ-Ռուսաստան հարաբերություններ: Գորդոնը նաեւ անդրադարձել է Արեւելյան գործընկերությանը՝ այդ նախաձեռնությունը որակելով որպես մի ծրագիր, որ բխում է նաեւ տարածաշրջանում ԱՄՆ-ի նպատակներից:

Ռուսաստանի առնչությամբ Ֆիլիպ Գորդոնը չի մոռացել հիշատակել մարդու իրավունքների վերաբերյալ «ԱՄՆ-ի մտահոգությունների» մասին, որոնք որեւէ կերպ չեն ի հայտ գալիս, ասենք, հարեւան Ադրբեջանում, որտեղ տիրող իրավիճակի առնչությամբ հայտարարություններ են տարածել աշխարհի գրեթե բոլոր շահագրգիռ եւ ոչ շահագրգիռ կառույցները:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Թուրքամետ կոնգրեսականի աշակերտը՝ Հայաստանում ԱՄՆ դեսպանի թեկնածու

**ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման Հայաստանում ԱՄՆ դեսպանի նոր թեկնածություն է առաջ քաշել ի դեմս Ջոն Հեֆֆերնի: Ըստ Սպիտակ տան հաղորդագրության, Հեֆֆերնը ներկայումս զբաղեցնում է ՆԱՏՕ-ում ԱՄՆ առաքելության ղեկավարի տեղակալի պաշտոնը, իսկ մինչ այդ աշխատել է Ինդոնեզիայում ԱՄՆ դեսպանատանը:**

**Ըստ Հեֆֆերնի պաշտոնական կենսագրության, նա իր գործունեության ընթացքում առավելապես աշխատել է Արեւելյան Ասիայում՝ պաշտոնավարելով Մալայզիայում, Ճապոնիայում, Չինաստանում եւ Ինդոնեզիայում: Դիվանագիտական կարիերան սկսել է 1982-ից:**

**Տարբեր պաշտոններ զբաղեցնելով Չինաստանում, Տայվանում եւ այլուր, որոշ ժամանակ անց վերադարձել է Վաշինգտոն եւ ապա աշխատել ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում՝ կոնգրեսական Բիրեյտրի մոտ որպես Փիրսընի հիմնադրամի ուսանող: Հետագա կարիերան զարգացել է արդեն Ճապոնիայում ԱՄՆ դեսպանատանը պաշտոնավարմամբ, ապա նաեւ Ինդոնեզիայում, որից հետո արդեն 2009-ից դարձել է ՆԱՏՕ-ում ԱՄՆ առաքելության ղեկավարի տեղակալ:**

**Հայկական համատեքստում, իհարկե, նախ հետաքրքրական է, որ Հայաստանում նշանակում է տարածաշրջանային ասիական հարցերով մասնագիտացած դիվանագետ, սակայն առավել հետաքրքրական է ԱՄՆ Ներկայացուցիչների պալատում Հեֆֆերնի փորձառության եռամյա շրջանը, երբ նա աշխատել է որպես կոնգրեսական Բիրեյտրի օգնական: Բիրեյտրը հայտնի թուրքամետ կոնգրեսական է եղել՝ իր երկարաձիգ պաշտոնավարության ընթացքում դեմ արտահայտվելով ու նաեւ քվեարկելով Հայոց ցեղասպանության՝ Կոնգրեսի տարբեր մակարդակներում քվեարկության դրված օրինագծերին:**

**Հիշեցնենք, որ Հայաստանում ԱՄՆ ներկայիս դեսպան Մարի Յովանովիչն իր եռամյա դիվանագիտական առաքելությունը կավարտի հունիսին, որից հետո, վերադառնալով Վաշինգտոն, կզբաղեցնի ԱՄՆ պետքարտուղարի տեղակալի՝ Հյուսիսային եւ Կենտրոնական Եվրոպայի հարցերով օգնականի պաշտոնը:**

Ա. Հ.

# Երախտագիտություն եւ հավատ՝ հարազատ կրթօջախին

## *Արշակունի Մելգոնյան վարժարանի 85-ամյա հոբելյանի հանդիսությանը*

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

2005 թ. սփյուռքահայությունը նոր տագնապ ու խռովք ապրեց. փակվում էր հայկական սփյուռքի ամենահին կրթարաններից մեկը՝ Կիպրոսի Մելգոնյան վարժարանը, եւ հայության ընդդիմացող ստվար հատվածը՝ արտերկրի եւ Հայաստանի, արդյունքի չհասավ: Ութ տասնամյակ շարունակ հայ ոգուն նվիրաբար ծառայող հայապահպան այդ դպրանոցը, հայապաստան բերդամրոցը փակվեց՝ հիմնադրված մեր ժողովրդի դժվարագույն՝ հետեղեռնյան առաջին շրջանում՝ 1924-ին, ազգային բարերարներ Գրիգոր եւ Կարապետ Մելգոնյանների կտակով՝ նախապես որպես որբանոց-նախակրթարան: Երեք տարի անց այն վերածվեց բարձրագույն նախակրթարանի եւ 1934-ից արդեն լրիվ միջնակարգ գիշերօթիկ վարժարան էր: Հայկական մթնոլորտի, կրթական-մանկավարժական հարուստ ավանդույթների շնորհիվ այս վարժարանը սփյուռքահայության համար իսկապես որ «կտոր մը Հայաստան» դարձավ, եւ սփյուռքի այն քիչ կրթարաններից էր, որին ծանոթ էին շատերը՝ անգամ Սով. Հայաստանում:


ՖՈՏՈԼՈՒՐ

*Տես էջ 2*

# Վաղվա «Ազգ. Մշակույթ-Հավելվածում»

**Հակոբ Հակոբյանի խոհագրության շարքից՝ «Անմահություն»:**

**Նվիրված լեհ մեծանուն կոմպոզիտոր Ֆրեդերիկ Շոպենի 200-ամյակին. Արամ Աբրահամյան. «Փխրուն կիրքը»:**

**Նորայր Ադալյան. Դիմանկարի փորձ՝ Արմեն Խանդիկյանի ծննդյան 65-ամյակի առիթով:**

**Փարիզում 1931-ին լույս տեսնող «Ազդարար» թերթի մի արձագանքը Վիլժուիֆի հոգեբուժարանում գտնվող Կոմիտասի վիճակներին՝ Գոհար Աճեմյանի ներկայացմամբ:**

**Թանգարանային արխիվից. ակնարկ Ալեքսանդր Սպենդիարյանի եւ Անտոնի Արենսկու հանդիպումներից:**

**Անահիտ Հովսեփյանի վերաբերմունքը «Եվրոտեսիլ-2011»-ի քաղաքականությանը: Եվս այլ հրապարակումներ:**

Մ. Բ.

# Երախտագիտություն եւ հավատ...

*1-ին էջից*

Մելգոնյան վարժարանի սաները՝ աշխարհի տարբեր երկրներից մեկ հարկի տակ հավաքված հայ պարմանի-պարմանուհիներ, ուսանում էին ինչպես հայագիտական, նաեւ բնագիտական առարկաներ, օտար լեզուներ: Ժամանակակից կրթության համար վարժարանն օժտված էր բոլոր միջոցներով, ուներ համապատասխան սարքավորումներով լաբորատորիաներ, հարուստ գրադարան, ակումբներ, մարզադաշտ, լողավազան, հիվանդանոց, համակարգչային սրահ, ձեւավորվել էին արվեստի տարբեր խմբակներ, քառաձայն երգչախումբ, փողային նվագախումբ, հրատարակում էր սեփական տարբերականը («Ցոլք»), դպրոցական տարեգիրքը («Այգ»):



Ազգային մթնոլորտ եւ մանկավարժական ավանդույթներ Մելգոնյանը ձեւավորել էր տեւական աշխատանքային փորձի կուտակումով, այն վառ անհատականությունների շնորհիվ, ովքեր ղեկավարում էին հաստատությունը եւ դասավանդում այստեղ, ինչպես՝ Հակոբ Թոփչյանը, Հակոբ Օշականը, Բարսեղ Կանաչյանը, Վահան Թեքեյանը, Վահրամ Մավյանը, Գեւորգ Պողոսյանը, Հովհաննես Շեոհմելյանը, Գերսամ Ահարոնյանը, Վահե-Վահյանը, Սեդրաք Աբգարյանը եւ ուրիշներ:

Վարժարանի տարբեր տարիների շուրջ 1500 շրջանավարտներ տարբեր մասնագիտություններով նպաստել եւ շարունակում են նպաստել իրենց երկրների տնտեսական, մշակութային, կրթական, առողջապահական եւ այլ ոլորտների զարգացումներին: Նրանցից երկուսի՝ Կարպիս Սուրենյանի եւ Հակոբ Հակոբյանի արվեստը արդի հայ գրականության եւ գեղանկարչության ամենաբարձր նվաճումներից է, մեր մշակույթի պատմության լուսավոր ու մնայուն էջերից:

Ցավոք, արդեն 6 տարի է, գոց են Մելգոնյան վարժարանի դռները: Այլապես հաստատության 85-ամյա հոբելյանի հանդիսությունը պիտի որ նրա հայաշունչ կամարների ներքո անցներ: Այդպես չեղավ: Եվ ահա վարժարանի 1968-ի երախտապարտ շրջանավարտները գտան այլընտրանքը՝ հարազատ կրթարանի 85-ամյակը տոնելու լավագույն վայրը եւ տարբեր երկրներից խմբվեցին Երեւանում, մայիսի 18-ին, երեկոյան, Կոմիտասի անվան կամերային երաժշտության տան հյուրասեր ու ջերմիկ սրահում:

Բանախոսության եւ համերգային երկու մասերից բաղկացած հանդիսությունն անցավ պատշաճ կազմակերպությամբ, ազգային-հոգեւոր բարձր մթնոլորտում, ավարտին՝ հյուրասիրությամբ: Երեկոյի հաջողությունը պայմանավորված էր բանախոսների՝ Կարպիս Սուրենյանի, Բյուզանդ Ագպաշյանի, Սեդրաք Աբգարյանի ելույթների հագեցվածությամբ, ճիշտ ընտրված հանդիսավարի՝ փորձառու հեռուստամեկնաբան Արթուր Բախտամյանի՝ մթնոլորտը շահեկանորեն հարստացնող խոսքի ոչ միայն հանդիսավոր երանգով, այլեւ վերաբերմունքային շեշտադրությամբ եւ, իհարկե, գեղարվեստական ծրագրի մասնակից՝ Հայաստանի պետական կամերային երգչախմբի համերգային ներկայությամբ, Ռոբերտ Մլքեյանի ղեկավարությամբ:

ՀՀ պետական հիմներգից եւ Մելգոնյան կրթական հաստատության քայլերգից հետո Արթուր Բախտամյանի առաջարկով բեմի էկրանին ցուցադրված լուսապատկերները ներկայացրին վարժարանի պատմության տարբեր դրվագներ: Հանդիսավարն անդրադարձավ Մելգոնյան կրթարանի կարեւոր շրջաններին, հիշատակեց հիմնադիրին՝ Կարապետ Մելգոնյանին եւ մի դրվագ ներկայացրեց, երբ վարժարանը կառուցելու տեղ էր նա փնտրում եւ ամեն անգամ շատ արագ հեռանում: Երբ հարցնում են պատճառը, ասում է, որ պիտի այնպիսի տեղ լինի, որտեղից որեւէ մզկիթ չերեւա: «Իսկ մենք այսօր, XXI դարում Եվրոպայի կենտրոնում հայկական վարժարան ենք փակում»:

Դժվար ժամանակ է ապրում այսօր Մելգոնյանը, դադարել է նրա սրտի բաբախը: Բայց դժվարություններ անցյալում էլ ունեցել է: 1939-1945-ի պատերազմական շրջանում վարժարանում ուսանում էր գրող, թարգմանիչ, էսսեագիր Կարպիս Սուրենյանը: Կարճ խոսեց Կարպիս Սուրենյանը: Բայց ընթերցողներին հայտնի է 2005-ին հրատարակված նրա երկհատոր ծավալուն Օրագրերը («Սարգիս Խաչենց» հրատ., հովանավորությամբ՝ «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկության), որի առաջին հատորի մի զգալի մաս նվիրված է Մելգոնյան վարժարանի ուսումնառության տարիներին: Երբ նա տակավին պատանի, բայց արդեն կյանքի ու գոյի որոնումներում ու լուրջ բացահայտումներում, օրագրություն էր անում՝ թղթի կտորտանքներին, հաշվապահական թղթերի բաց տեղերին գրառումներով:

Նա պատմեց, որ 1942-ին, երբ ռազմական իշխանությունները դպրոցի շենքը գրավեցին եւ զորանոցի վերածեցին, իրենք ստիպված եղան բարձրանալ մոտակա լեռները եւ պատսպարվել Մակարավանքում եւ վրանների տակ: Բայց, պատմում էր նա, որեւէ ռումբ չպայթեց դպրոցի վրա, մինչդեռ 1974-ին, երբ Թուրքիան մտավ Կիպրոս, 40 ռումբ նետեց կրթարանի վրա:

«Ի՞նչն էր պահում մեզ եւ մղում զոհողությունների», հետահայաց հարց է տալիս գրողը, որի պատասխանը շատ վաղուց ունի՝ «Հայկական ոգին պահպանող ավանդույթները, հայկական շունչը, մթնոլորտը», ինչն, իհարկե, ստեղծում էին իրենց ուսուցիչները, մի մասը եվրոպական բարձրագույն ուսում ստացած, ինչպես՝ Պողոս Գեւորգյանը, «որ դաստիարակում էր, առանց դաստիարակելու», Գերսամ Ահարոնյանը, Հովհ. Շեոհմելյանը եւ ուրիշներ: «Մելգոնյանն ըստ էության չի փակվել եւ չի կարող փակվել, որովհետեւ պատմություն ունի եւ հայ մշակույթի անբաժանելի մասն է»:

1968-ի շրջանավարտ է Բյուզանդ Ագպաշյանը, որի՝ հանդիսությանը շուք հաղորդող ելույթի սկիզբը հարգանքի տուրք էր կյանքից հեռացած մելգոնյանցի ուսուցիչներին եւ ընկերներին. մեկ րոպե լռությամբ դահլիճը հարգեց նրանց հիշատակը: «Մելգոնյանը դուռ էր, որ կբացվեր հայ երիտասարդի մը համար՝ հայ ոգիով կրթության: Մելգոնյանը ազգային բուժարան էր՝ հայ մնալու, հայ ապրելու»:

Վարժարանի երկարամյա ուսուցիչներից, ներկայում «Գոհար» երգչախմբի ղեկավար Սեդրաք Աբգարյանը պատվավոր հյուրն էր հանդիսության, որի խոսքը մերթ հանդարտ, մերթ արտիստիկ ու մերթ հուզված էր: Իր համար առանձնահատուկ տոնական այդ օրը թանկ հիշողությունների վերադարձ էր, բայց միաժամանակ տխրության առիթ՝ վարժարանի ներկա վիճակի պատճառով, երբ «կտոր մը հայրենիքի դռները փակվեցին, անհաղորդ ու անկայուն մարդոց որոշումով»: Նախորդ բանախոսների եւ ներկաների պես նա նույնպես հավատում է վարժարանի վերաբացմանը. «Իրենց հոգիին մեջ այդ հաստատության սերը, սքանչելի հուշերը կուգան միանալու հայրենի հողին վրա՝ ըսելու որ 2005-ին Բարեգործական ընկերութիւնը պիտի Հայաստանի մեջ երկրորդ Մելգոնյան կրթարանը բանար. չհաջողեցավ: Բայց այս տղոց ըրածը ձեւով մը վարժարանը նորեն կառուցանել է»: Հուզիչ էր այն պահը, երբ նա այսքան տարիներ պահած մելգոնյանական մասունքներ վերադարձրեց նախկին սաներին, եւ նրանց նվերն էլ սիրելի ուսուցչին Մեսրոպագիր այբուբենի խորհրդանշական կտավ էր:

Հանդիսության հետավարտի իմ զրուցակիցը նախկին մելգոնյանցի, այժմ Աթենքում բնակվող Շահեն Բարդաքչյանն էր՝ Ամերիկյան բժշկական մի ընկերության Միջին Արեւելքի, Աֆրիկայի եւ Հյուսիսային Ամերիկայի ներկայացուցիչ: «Այս գործս էլ կպարտիմ Մելգոնյանի դաստիարակության, որտեղ ուսմանս 7 տարին բոլորած եմ, 68-ին ավարտելով եւ անկե վերջ Երեւան ուսանած եմ: Մելգոնյան վարժարանը ազգապահպանման կարեւոր գործ կկատարե սփյուռքի մեջ: Եվ հիմա այսպիսի առիթ մը պետք չէ կորսնցնել, քանի որ Եվրոմիության մեջ միակ հաստատությունը կըլլա, որ կաղրեր կհայթայթե սփյուռքի տարբեր համայնքներեն եւ շատ կարեւոր է այդ հանգամանքը օգտագործել եւ վերաբացել դպրոցը: Եթե նկատի առնենք փոխնախարարի խոսքը, պետք է բոլորովին հույսով ըլլանք, որ երկու տարի վերջ վարժարանի վերաբացման հանդեսին դարձյալ Երեւանի մեջ կգտնվենք»:

# $ 60 մլն՝ Երեւանը շրջանցող ճանապարհների համար

## *Ամենախոշոր ներդրումային ծրագիրը մայրաքաղաքի տրանսպորտի ոլորտում*

**Ինչպես տեղեկացանք Երեւանի քաղաքապետարանի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից, Երեւանի քաղաքապետ Կարեն Կարապետյանը եւ Ասիական զարգացման բանկի տարածաշրջանային տնօրեն Մեթյու Վեսթֆոլլը երեկ, վարկային պայմանագրի շրջանակներում, համաձայնագիր են ստորագրել քաղաքային ենթակառույցների եւ կայուն քաղաքային զարգացման ծրագրի վերաբերյալ:**

**Ծրագրի առաջին մասնաբաժինը՝ 60 մլն դոլար արժողությամբ, հատկացվելու է Երեւանի շրջանցիկ ճանապարհների կառուցմանը: Մասնավորապես, համաձայնագրով նախատեսվում է առաջիկա երեք տարում կառուցել 5,6 կմ ճանապարհ, 3 էստակադա, Հրազդան գետի վրայով 140 մ երկարությամբ կամուրջ եւ տարբեր անցուղիներ, ուղետարներ ու հենապատեր: Շրջանցիկ ճանապարհներ կկառուցվեն Արտաշատի մայրուղին Շիրակի փողոցին միացնող հատվածում՝ շրջանցելով Նորագավիթը: Նոր ճանապարհ կկառուցվի նաեւ Շիրակի փողոցից դեպի Արգավանդի խճուղի տանող հատվածում:**

**Ըստ քաղաքապետարանի հաղորդագրության, շրջանցիկ ճանապարհների կառուցումը զգալիորեն կբեռնաթափի քաղաքի կենտրոնը տրանսպորտային հոսքերից, անմիջական կապ ստեղծելով հարավային ուղղության՝ Արտաշատ, Էջմիածին երկու մայրուղիների միջեւ, ինչպես նաեւ որոշակի դերակատարություն կունենա հյուսիս-հարավ մայրուղու երկու առանձին հատվածների միացման հարցում:**

**Պատասխանելով լրագրողների հարցերին, Ասիական զարգացման բանկի տարածաշրջանային տնօրեն Մեթյու Վեսթֆոլլը եւ Երեւանի քաղաքապետի խորհրդական Աշոտ Մնացականյանը շեշտել են, որ այս ծրագրերի իրականացումը կարեւոր նշանակություն կունենա Երեւանի տրանսպորտային հոսքերի կարգավորման հարցում: Քաղաքապետի խորհրդականը նշել է, որ Ասիական զարգացման բանկի հետ իրագործվող այս ծրագիրը Երեւանում անկախության տարիներից ի վեր նախատեսվող ամենախոշոր ներդրումային ծրագիրն է տրանսպորտի ոլորտում:**

**Ա. Ս.**

ԾՈՎԱՐՇԱՎ

# Հանդիպումներ Սիդնեյում

**Մեր «Արմենիա»-ն վարժվել է դիմավորողների ջերմ հանդիպումներին արդեն բազմաթիվ նավահանգիստների նավամատույցներում: Բայց որ իրեն դիմավորեն նեղուց-ծովախորշի դարպասների մոտ, համարյա բաց օվկիանոսում, դա արդեն ավելին է, քան անակնկալը: Մոտ տասը առագաստանավեր՝ Մայր Հայրենիքի դրոշի տակ... Իսկ Սիդնեյին մոտենալուն զուգընթաց դրոշների թիվը մեծացավ: Բոլոր այսպես ասած՝ լողամիավորներից տարածվում էին բարձր հնչող հայկական քայլերգեր: Հենց այդ պահին «Արմենիա»-ի վերեւում դանդաղ բացվեց երեսունմետրանոց դրոշ-առագաստը, կամ առագաստ-դրոշը: Ամենամեծ շարժիչային զբոսանավակը, որ վարում էր հայ-սիդնեյական «տորմիղի» հրամանատար Ավո Սողոմոնյանը, ընդհուպ մոտեցավ «Արմենիա»-ին, եւ ցում եմ, նշում կենսագրական եւ նույնիսկ աշխարհագրական ինչ-որ տվյալներ: Նշանակում է, նրանց հետ ես դեռ պետք է հանդիպեմ: Գիտեմ, որ խումբը գլխավորում է Գառնիկ Հակոբյանը, եւ որ այդ խմբում էին իմ այնպիսի մտերիմ բարեկամներ ու ծանոթներ, ինչպես Հակոբ Աբուլակյանը, Վարուժան եւ Սիլվա Իսկանդարյաններ ամուսնական զույգը, Մադլանա Իվանյանը, Վարդուհի Լեբեջյանը եւ ուրիշներ: Սակայն չմոռանանք եւ նորից հիշենք «ծովակալ» Ավո Սողոմոնյանին, որն իրոք ծովակալի պես էր ղեկավարում իր հայկական «նավատորմը»:**

**Մատույցը, որտեղ կառանվեց «Արմենիա»-ն, գտնվում է Սիդնեյ քաղաքի ամենակենտրոնում: Եվ այն տարածքը, որտեղ հիմա մեր նավն է կանգնած, պատկանում է Ծովային թանգարանին: Ավստրալիայի հենց**




**Սամվել Բաբասյանն ու Հայկ Բադալյանը, հուզմունքով իրար անցած, այնտեղ տեղափոխվեցին իրենց ֆոտո-հեռուստատեսային սարքերով: Նույն պահին էլ «պատյանազերծեցին» դրանք ու գործի անցան: Ժամանակ առ ժամանակ նավերից մեկնումեկը՝ երեխաներով, մայրիկներով, հայրիկներով, նույնիսկ՝ տատիկներով ու պապիկներով, մոտենում էր «Արմենիա»-ին, եւ մենք բոլորս, ծովախորշում տարածված անհավանական աղմուկի, դռռոցի տակ գոռալով ողջունում էինք միմյանց, հազիվ զսպելով արցունքները:**

**Մատույցն ավելի ու ավելի էր մոտենում: Մենք իհարկե գիտեինք, որ այնտեղ մեզ սպասելու են, ինչպես եղել է ամենուր: Բայց որ միաժամանակ տեսնելու էինք հազարավոր ու հազարավոր հայրենակիցների, որոնց հետ էր ճանաչել կարմիր-կապույտ-նարնջագույն հայկական ծիածանների մեջ, երիտասարդների՝ սկաուտական փողկապներով եւ ալիքագույն համազգեստներով, տատիկների ու պապիկների՝ շրջապատված թոռներով, ու լսել նրանց շուրթերից բարձր հնչող «Հա-յաս-տա՛ն»...**

**Երբ մենք առաջնորդող նավին հանձնեցինք մեր Բաբասին ու Հայկին, նրանց փոխարեն մեր տախտակամած բարձրացավ ընթերցողին արդեն հայտնի Հակոբ Աբուլակյանը, որն արդեն մի ամիս քուն ու դադար կորցրած զբաղվում է «Արմենիա»-ի հետ հանդիպման կազմակերպմամբ: Շուտով ես կհայտնվեմ դժվարին կացության մեջ հենց թեկուզ այն պատճառով, որ անհնար էր հավաքել բոլոր նրանց անունները, ովքեր մի ամբողջ կոմիտե էին կազմել Մեսրոպ Մաշտոցի անվան ծովարշավի մասնակիցների հանդիպումը կազմակերպելու համար: Եվ հիմա չեմ համարձակվում ներկայացնել ցանկը, վախենալով, որ լիակատար չի լինի: Խնդիրը նաեւ այն է, որ ես սովորաբար ցուցակով չեմ թվարկում անունները, այլ սկզբում զրու-**

**այդ նույն սիրված ու հեղինակավոր թանգարանի տնօրեն, միսսիս Վիկի Նորտին, իմանալով «Արմենիա»-ի ժամանման մասին, իր ծառայությունները առաջարկեց արշավախմբի հանդիսավոր ընդունելության հարցում: Ուշադիր կարդալով մեր բուկլետը ծովարշավի խնդիրների մասին, որի շրջանակներում «Արմենիա»-ն շուրջերկրյա նավարկություն է կատարում Սփյուռքի ճամփաներով, նա ոչ միայն տրամադրեց իր նավամատույցը, այլեւ թանգարանի էլիտար դահլիճը՝ հանդիսությունները անցկացնելու համար: Եվ ինքն էլ ներածական խոսքով բացեց միտինգը: Ամբողջ դահլիճը կատարեց Ավստրալիայի եւ Հայաստանի օրհներգերը:**

**Հերթական հռետորի յուրաքանչյուր ելույթից հետո պատանիների ինքնագործ խմբերը հայկական երգեր ու պարեր էին կատարում: Դահլիճը հոտնկայս դիմավորեց մեր հայրենակցուհի Գլեդիս Բերեջիկլյանին, որին բառացիորեն օրերս նշանակեցին տրանսպորտի նախարարի պաշտոնում: Տիկին Բերեջիկլյանի հետ «Արմենիա»-ի անձնակազմը կհանդիպի պաշտոնական ընդունելության ժամանակ: Այդ ժամանակ էլ ընթերցողին կպատմեմ այն կնոջ մասին, որն Ավստրալիայում այդպիսի բարձր պաշտոն զբաղեցնող առաջին հայուհին է: Երեկոյան հսկայական սրահում տեղի ունեցավ անձնակազմի հանդիպումը հայ հասարակայնության հետ:**

*Տես էջ 8*

# Երեւանի գլխավոր ճարտարապետը հրաժարական է տվել

Երեւանի գլխավոր ճարտարապետ Միքայել Հասրաթյանը իր դիմումի համաձայն ազատվել է աշխատանքից: Աշխատանքից ազատման դիմումի մեջ հիմնավորումները նշված չեն:

Երեւանի գլխավոր ճարտարապետի թափուր պաշտոնում նոր նշանակման մասին առաջիկայում կտեղեկացնեն քաղաքապետարանից:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 375010 Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Րաֆֆի Հովհաննիսյանն իշխանություն-ՀԱԿ երկխոսությունը արժանապատիվ գործարք վերնագրեց



«Ժառանգության» առաջնորդ **Րաֆֆի Հովհաննիսյանը** այս շաբաթ օրն իր հրավիրած քաղաքացիական ժողովից առաջ երեկ «Հայացք» ակումբում հանդիպեց լրագրողներին: Այս նոր քաղաքացիական ժողովը նա շատ կարեւոր հանգրվան համարեց, որտեղ բանավեճում պետք է պարզ դառնա, թե որո՞նք են ներկա հանրային մարտահրավերների լուծումները: Ժողովին լսելու են մտավորականներին եւ շարքային քաղաքացիներին՝ հետագա ուղղություն հայցելու, ճշտելու քաղաքացիական-ազգային օրակարգը: «**Ազգը**» հետաքրքրվեց՝ ճի՞շտ են մի շարք քաղաքական ուժերի հետ գաղտնի հավաք անելու, հետագա համագործակցության հեռանկար ճշտելու լուրերը, ըստ որում՝ խոսք կա այդպիսի դաշինքը հետագայում Ռոբերտ Քոչարյանի ղեկավարմանը հանձնելու հեռանկարի մասին, Ր. Հովհաննիսյանը պատասխանեց. «Ես չեմ հավատում փակ հանդիպումներին, եթե ես ունենամ որեւէ հանդիպում, որ ունենալու է հանրային հնչեղություն, ես ինքս կլինեմ դրա տեղեկատվության աղբյուրը: Այդպիսի հանդիպումներ տեղի չեն ունեցել. ընթացել են քաղաքացիական-քաղաքական-հասարակական զրուցակիցների հետ հերթական հանդիպումներ, բայց այնպիսի հավաք, որին դուք հղում եք անում, տեղի չի ունեցել: Նման նպատակ ունեցող դաշնություն ես բացառում եմ, բայց չեմ բացառում, որ մենք կշարունակենք այս խորհրդակցությունների գործընթացը հնարավորինս լայն տարապատկերում»:

Գործող իշխանության եւ ընդդիմադիր գործընկերների երկկողմանի խնդիրն է՝ ՀԱԿ-իշխանություն համագործակցությունը ի՞նչ եզրաբանությամբ եւ դիալեկտիկայի ի՞նչ հոլովույթով մատուցեն, բայց եւ քաղաքական դիալոգի, հանրային երկխոսության հարցը նոր չէ, 1991-ից տարբեր ձեւաչափերով օրակարգի նյութ է: Իսկ 2008 թվականի մարտի 1-ից հետո մենք չպետք է սպասեինք երեք տարի՝ պահանջելու արդարադատություն բոլոր մեղավորների համար, քաղաքական բանտարկյալները պետք է ազատ արձակվեին ոչ թե 2011 թվականի մայիսի 28-ի նախաշեմին, այլ 2008 թվականի մայիսի 28-ի նախաշեմին: ՀԱԿ-ի պահանջները նոր չեն եւ «Ժառանգությանը» տարամոտ են եղել: Որ երեք տարի հետո ՀԱԿ-ն ու իշխանությունը երկուստեք մոտեցել են երկխոսության, դա ողջունելի է, բայց նպատակը պետք է լինի Հայաստանի հանրապետությունում ամբողջական իշխանության արտահերթ եւ նորովի ձեւավորումը: Իսկ պահանջները, ակնկալիքները, հանրային վերջնագրերը չի կարելի սեփականաշնորհել, այդ պահանջները տարիների ընթացքում գոյություն ունեցող ժողովրդական- քաղաքացիական պահանջներ են, նոր չեն, արտահայտել են տարբեր խմբեր, տարբեր ղեկավարներ: Երկխոսության առումով Ր. Հովհաննիսյանը ենթադրեց, թե միգուցե հանրային միջավայրը փոխվել է՝ կան արտաքին գործոններ, Միջին Արեւելքի հեղափոխությունների ֆոնը, նաեւ՝ իշխանական ու ընդդիմադիր ներքին վերանայումներ, բայց ակնհայտ է, որ մի տարի առաջ առկա դիպուկ բնութագրումներն այժմ բացակայում են: Ըստ Հովհաննիսյանի, սակայն, անհիմն ակնկալիք է միայն խորհրդարան մտնելը, ավելի մեծ հարց պետք է լուծվի՝ ամենաանհավանական բանաձեւերով եւ դաշնային աշխատանքով: Իշխանություն-ՀԱԿ երկխոսությունը արժանապատիվ գործարք վերնագիրն է կրում, նկատեց «Ժառանգության» առաջնորդը:

Տեր-Պետրոսյանի հետ այդպես էլ չլուսաբանված հանդիպումը քաղաքավարական, եւ ոչ թե քաղաքական հանդիպում է եղել, որի ժամանակ դիտարկվել են վերջին շրջանն ու ապագան: Այդ առումով նա բացատրեց, որ Հայաստանի յուրաքանչյուր նախագահ իր ներդրումը կատարել է Հայաստանի պետականաշինության մեջ եւ իր չափով նաեւ իր պատասխանատվությունը կրում է այսօրվա անիրավ, անսահմանադրական, հակաժողովրդական վիճակի համար՝ ամեն մեկը յուրովի. «Եվ ես համարում եմ, որ այդ նույն պետական գործիչների պատասխանատվության ոլորտում է, որ իրենք նոր սերնդի համար այլընտրանքներ պատրաստեն»: Ըստ նրա՝ ոչ մի նախագահ չպետք է իրեն թույլ տա «ես այլընտրանք չունեմ» արտահայտությունը, դա կնշանակի, որ պետության գործը տապալվել է: Ուստի «Ժառանգությունն» իր գործն անելու է եւ մասնակից է լինելու այդ նոր այլընտրանքի ստեղծմանը եւ մատուցմանը. «Երեք նախագահների ներդրումը պետք է արժանանա թե՛ քաղաքական, թե՛ իրավական գնահատականի, իսկ կարեւոր է, թե ո՞վ է լինելու չորրորդը: Ո՞րն է լինելու մեր չորրորդ գույնը, մեր չորրորդ ներկայացուցիչը՝ ես կարծում եմ, որ նա լրիվ նոր տիրույթից է լինելու», ասաց նա՝ վստահեցնելով, որ ինքը չի լինելու Հայաստանի նախագահի չորրորդ թեկնածուն, իսկ չորրորդ գույնի՝ Հայաստանի ապագայի հարցը «դուք պիտի որոշեք»: Իսկ թե ո՞ւմ է տեսնում որպես նախագահի ապագա թեկնածուի, ըստ Հովհաննիսյանի, հարյուրավոր տղամարդիկ եւ կանայք կան Հայաստանում, որ կարող են նախագահի թեկնածու լինել:

Մարտի 1-ի բացահայտմանը նա թերահավատ է, որովհետեւ մինչեւ հիմա նույնիսկ մեկ քրեական գործ չկա, որտեղ ամբաստանյալ լինի. «Մարտի 1-ին գործում էր երկրորդ նախագահը, վարչապետը, որը դարձավ երրորդ նախագահ, եւ ընդդիմության գլխավոր դերակատարն էր Հայաստանի առաջին նախագահը», ասաց նա՝ հավելելով, որ լուծումը Սահմանադիր Հայաստանի կայացումն է, որտեղ կլինի հատուկ դատախազի ինստիտուտ, ով կկարողանա վկայություններ վերցնել բոլորից՝ նախագահներից, գեներալներից, բարձր պաշտոնյաներից...

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# Orange-ը երկարացրել է լիցքավորման վավերականության ժամկետները

**Երեւան, 19 մայիսի, 2011թ.:** Orange-ը լավ նորություններ ունի իր կանխավճարային ձայնային ծառայության բաժանորդների համար: Ընկերությունը երկարացրել է լիցքավորումների վավերականության ժամկետները՝ որոշների համար անգամ կրկնապատկելով դրանք: Այսպիսով, այսուհետեւ լիցքավորելով հաշիվը 500 դրամով, բաժանորդը նախկին 7 օրվա փոխարեն կկարողանա զանգեր կատարել 15 օրվա ընթացքում, 1000-ի դեպքում՝ 1 ամսվա, 1500-ի դեպքում՝ 2 ամսվա եւ այլն:

Ավելին, յուրաքանչյուր լիցքավորման վավերականության ժամկետի ավարտից հետո Orange-ի կանխավճարային ծառայության բաժանորդներն ունեն 6 ամիս՝ զանգեր, կարճ եւ մուլտիմեդիա հաղորդագրություններ ընդունելու համար: Ընդ որում, այս ժամանակահատվածում բաժանորդի հաշվին եղած գումարն ամբողջությամբ կպահպանվի:




«Orange-ում բազմաթիվ առաջարկներ կապված են լիցքավորման հետ, ինչպես օրինակ՝ շաբաթ եւ կիրակի օրերին անվճար զանգերը, ամեն շաբաթ 100 հեռախոսո նվեր ստանալու հնարավորությունը եւ այլն: Ուստի կարծում ենք, որ այժմ լավագույն ժամանակն է բարելավելու լիցքավորման ժամկետները», ասաց Orange-ի գլխավոր տնօրեն **Բրունո Դյութուան**:

Orange-ը հիշեցնում է իր այն բաժանորդներին, ում հաշվի վավերականության ժամկետը նախկինում երկարացվել է մինչեւ հունիսի 6-ը, վերալիցքավորել հաշիվը մինչեւ այդ օրը՝ քարտն ակտիվ պահելու եւ վավերականության նորացված ժամկետներից օգտվելու համար:



# «Իրավիճակի ինչ-ինչ զարգացումները մեր հայ գործընկերները ընկալում են որպես իրենց ուղղված վտանգ»

*1-ին էջից*

**Հենց նույն սկզբունքով էլ մենք գործել ենք 1991-ին՝ Ադրբեջանի սանձազերծած պատերազմում: Այստեղ մենք ակնկալում ենք նաեւ ՀԱՊԿ-ում մեր գործընկերների աջակցությունը, որոնք ունեն համապատասխան պարտավորություն»:**

**ԱԳՆ քարտուղար Արթուր Բաղդասարյանը շեշտեց, որ Հայաստանը մշտապես եղել է եւ կա տարածաշրջանում խաղաղության եւ անվտանգության աջակցողը, մինչդեռ Ադրբեջանն ու նաեւ Թուրքիան՝ իրենց ոչ կառուցողական քայլերով մշտապես լարվածություն են մտցնում տարածաշրջանում: Ընդհանուր առմամբ՝ Բաղդասարյանը նշեց, որ ՀԱՊԿ-ի դերը տարեցտարի բարձրանում է, եւ Հայաստանը ամեն ինչ կանի, որպեսզի կազմակերպության հետ գործակցությունը էլ ավելի նպաստի տարածաշրջանային անվտանգությանը:**

**ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորդյուժան, ընդգծելով, որ իրավիճակը Հարավային Կովկասում, որն ավելի է սրվում «Ադրբեջանի ռազմական հռետորաբանությունից», ինքնին հրավիրում է ՀԱՊԿ ուշադրությունը, նշեց. «Այդ իրավիճակի ինչ-ինչ զարգացումները մեր հայ գործընկերները ընկալում են որպես իրենց ուղղված վտանգ»: Թերեւս առաջին անգամ միջազգային կազմակերպության պաշտոնատար անձը հրապարակավ ընդգծեց, որ հակամարտության միայն «մեկ կողմն» է օգտվում ռազմատենչ հայտարարություններից, եւ որ «ինչ-ինչ զարգացումները իրենց հայ գործընկերոջ համար ներկայացնում են վտանգ»: Ինչպես մենք արդեն գիտենք ՀԱՊԿ կանոնադրությունից՝ «Կազմակերպության անդամներից մեկի վրա ռազմական ագրեսիան կամ վտանգը ագրեսիա է ամբողջ կազմակերպության դեմ»: Բորդյուժան ընդգծեց նաեւ, թե ՀԱՊԿ-ը կարծում է, որ բոլոր հակամարտությունները պետք է լուծվեն բացառապես խաղաղ ճանապարհով՝ հիմնված միջազգային իրավունքի վրա: ՀԱՊԿ գլխավոր քարտուղարը հատկապես կարեւորեց ուժի չկիրառման, կամ դրա սպառնալիքի բացառման սկզբունքի պահպանումը: Այս համատեքստում Բորդյուժան ընդգծեց ԵԱՀԿ Մինսկի խմբի՝ հատկապես Ռուսաստանի ակտիվ դերակատարումը: Ելույթի վերջում ՀԱՊԿ գլխավոր քարտուղարը նշեց. «Մենք կարծում ենք, որ ինչպիսին էլ լինի իրավիճակը, որեւէ երկրի շրջափակումը անթույլատրելի է»:**

**«Ես ներողություն եմ խնդրում Բաքվից, որովհետեւ պետք է քննադատեմ», այսպես սկսեց իր զեկույցը Մինսկի խմբի ռուսաստանցի նախկին համանախագահ Վլադիմիր Կազիմիրովը՝ ընդգծելով, որ «ԼՂ հակամարտության հիմքերը Բաքուն շարունակում է քողարկել «օկուպացիայի» տակ»: Կազիմիրովը, զուգահեռներ տանելով հայր եւ որդի Ալիեւների միջեւ, նկատեց. «Հայրը ավելի իրատես էր. նա երբեք չէր շռայլում ռազմատենչ հայտարարություններ, մինչդեռ որդին, չնայած երդվում էր, որ հոր քաղաքական շարունակողն է, այդ սկզբունքը չի պահպանում»: Կազիմիրովը հիշեցրեց նաեւ, որ կողմերը, ընդ որում հակամարտության հիմնական կողմ ԼՂ-ն, հրադադարի ռեժիմի անցնելու վերաբերյալ գրավոր համաձայնության են եկել, ինչը կարծես թե Բաքվում մոռացության են մատնել: «Այնինչ առանց հրադադարի ռեժիմի ամրապնդման անհնար կլինի հակամարտության հետեւանքները լուծելը», նկատեց Կազիմիրովը: «Ինչո՞ւ է անտեսվում ուժի կիրառման եւ դրա սպառնալիքի բացառման սկզբունքի խախտումը», հռետորական հարցով հանդես եկավ Մինսկի խմբի նախկին համանախագահը: Անդրադառնալով հավանական նոր պատերազմին՝ Կազիմիրովը նկատեց, որ սա ՀԱՊԿ-ի ու Ռուսաստանի համար լուրջ փորձություն կարող է լինել. «Հաշվի առնելով մեր երկրում ապրող հայկական ու ադրբեջանական համայնքների հավանական պահվածքը նոր պատերազմի ժամանակ, Հյուսիսային Կովկասի առանց այն էլ անկայուն իրավիճակը, ինչպես նաեւ Սոչիի գալիք օլիմպիադան, Ռուսաստանը պարզապես չի կարող չմիջամտել այդ նոր՝ հավանական պատերազմում, չնայած, կարծում եմ, Իլհամ Ալիեւն էլ լավ հասկանում է, որ այն կարող է լուրջ վտանգ լինել Բաքվում իշխող էլիտայի համար»:**

**ՀԱՊԿ գործընկերները անդրադարձան նաեւ այսօր ԼՂ հիմնահարցի կարգավորման խաղաղ բանակցությունների սեղանին դրված հիմնական առաջարկությունների փաթեթին՝ այսպես կոչված մադրիդյան սկզբունքներին: Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի տնտեսագիտության եւ միջազգային հարաբերությունների ինստիտուտի գլխավոր գիտաշխատող Վիկտոր Շեյնիսը, առանձնացնելով մադրիդյան սկզբունքներից մի քանիսը, դրանց վերաբերյալ տվեց որոշ հարցեր: Մասնավորապես «ԼՂ շրջակա տարածքների վերադարձ՝ Ադրբեջանի իրավասության տակ» սկզբունքի առնչությամբ Շեյնիսը նկատեց. «Բայց չէ՞ որ այդ շրջանների պահումը ԼՂ անվտանգության երաշխիքն է»: «Տրամադրել ԼՂ-ին ժամանակավոր կարգավիճակ» սկզբունքի առնչությամբ Շեյնիսը հարցրեց. «Ո՞ւմ կողմից տրամադրել, ո՞վ է երաշխիք տվողը, որ այդ ժամանակավոր կարգավիճակը կհարգվի հակամարտ բոլոր կողմերում: Բացի դրանից՝ ի՞նչ է սա նշանակում՝ ԼՂ-ի ներկա կարգավիճակի ճանաչո՞ւմ»: Եվ վերջապես՝ «ԼՂ-ի վերջնական կարգավիճակի որոշում՝ բոլորի համար պարտադիր ընդունելի կամարտահայտության միջոցով» սկզբունքի կապակցությամբ Շեյնիսը նախ «աբսուրդ» որակեց Ադրբեջանի դիրքորոշումը, որ «Ամբողջ Ադրբեջանում պետք է հանրաքվե անցկացվի՝ ԼՂ կարգավիճակը որոշելու համար», այնուհետեւ նկատեց. «Իսկ ո՞ւմ կամարտահայտության՝ կոնկրետ»:**

**Շարունակելով «մադրիդյան թեման», «Քաղաքակրթությունների երկխոսություն» միջազգային կոորդինացիոն կոմիտեի անդամ Արամ Գասպարի Սարգսյանը, ընդհանուր առմամբ համաձայնելով Շեյնիսի դիտարկումներին, առանձնացրեց նաեւ «խաղաղապահ ուժերի տեղակայումը՝ հակամարտության գոտում». «Կարծում եմ՝ ոչ Հայաստանն ու Ադրբեջանը, ոչ էլ մանավանդ ԼՂՀ-ն չեն ցանկանա տեսնել կասկածելի քաղաքական նախասիրություններով խաղաղապահներ», ասաց Սարգսյանը: ԼՂ-ի վերջնական կարգավիճակի առնչությամբ նա նկատեց, որ եթե այսօր «անիմաստ» է համարվում ԼՂ-ի ժողովրդի արդեն իսկ արտահայտած կամարտահայտությունը ԽՍՀՄ սահմանադրությանը համաձայն, ապա ի՞նչ երաշխիք, որ անհայտ ժամկետներում անցկացվող նոր հանրաքվեն պետք է որեւէ արդյունք տա, մանավանդ որ Իլհամ Ալիեւից չենք դադարում լսել՝ «Ադրբեջանը երբեք չի համաձայնի Ղարաբաղի անկախությանը»»:**

**Ի դեպ, Ղարաբաղը՝ Ադրբեջանի կազմում կամ իրավասության տակ դիտելը՝ Վիկտոր Շեյնիսը դեռ սովետական տարիներից «սխալ եւ վտանգավոր» է համարում: «Հակամարտության հիմքը Կոմկուսի Կովկասյան բյուրոյի որոշումն է՝ հանձնել առավելապես հայերով բնակեցված Ղարաբաղի մարզը Ադրբեջանին: Այս որոշմանը հայերը արդարացիորեն երբեք չեն հաշտվել, բազմիցս, այդ թվում՝ սովետական տարիներին բարձրաձայնել են: ԽՍՀՄ իշխանությունները՝ ի դեմս Գորբաչովի, հնարավորություն ունեին լսելու ղարաբաղցի հայերի արդար պահանջը, բայց այդպես չեղավ», նշեց Շեյնիսը:**

# Լիբիայում հայերի գոյության մասին

Ինչպես հայտնի է, Հայոց ցեղասպանության 1915-1923 թթ. փուլից հետո ստեղծված հայկական սփյուռքի արաբական հատվածը հանգրվանեց արաբական արեւելքում միայն: Արաբական արեւմուտքի (Մաղրիբ) երկրներում (Լիբիա, Թունիս, Ալժիր, Մարոկկո, Մավրիտանիա, Արեւմտյան Սահարա) հայեր թեեւ հայտնվեցին, բայց թվաքանակով այնքան քիչ էին, որ հավաքական կյանքը կազմակերպելու միտված որեւէ կառույց անհնար էր ստեղծել:

Իսկ առհասարակ Լիբիայում հայեր եղե՞լ են եւ կա՞ն այսօր:

Հայկական մի շարք հրատարակություններում հանդիպել ենք անհեթեթության, թե Լիբիայում տասնյակհազարավոր հայեր են ապրում... Ըստ երեւույթին այս սխալը ծագել է ոմն անգրագետի՝ ռուսերեն Լիբիա եւ Լիբանան երկրանունները (Լիվիա, Լիվան) շփոթելու պատճառով, որից հետո, ինչպես ոչ քիչ է պատահում մեզանում, իրարից արտագրել-գողանալով եւ առանց դույզն իսկ կասկածանքի ենթարկելու տեղեկության ճշտությունը, այս սխալը ձնագնդի նման մեծացել է եւ դեռեւս միտում ունի մեծանալու: Մինչդեռ Լիբիայում հայերի թիվն այնքան աննշան է, որ հալեպահայ բանասիրող Հուրի Ազեզյանը (այժմ՝ պատմական գիտությունների թեկնածու) 1990-ականների սկզբին Հալեպում հրատարակած իր «Արաբական երկրների հայկական գաղթօջախները» հատորում չի հիշատակում Լիբիայում հայերի գոյության մասին: Նույն կերպ է վարվել նաեւ ՀՀ սփյուռքի նախարարությունը. 2010 թ. աշնանը լույս տեսած «Հայկական սփյուռք» տարեգրքի 2009 թվականի տվյալների մեջ Լիբիայում հայության գոյության մասին հեռավոր ակնարկ իսկ բացակայում է:

Լիբիան բաղկացած է հիմնականում երեք տարածաշրջաններից. արեւելքում՝ Կիրենաիկան (Բենգազի կենտրոնով, այսօր մեծ մասամբ գտնվում է երկրի մենատեր գնդապետ Մուամմար Քադդաֆիի հակառակորդների հակակշռի տակ), արեւմուտքում՝ Տրիպոլիտանիան (այսօր մեծ մասամբ գտնվում է Քադդաֆիի ձեռքում), եւ երկրի ներքին, ոչ ծովափնյա շրջանը, որը հիմնականում անապատային է՝ արաբ բեդվին, բերբեր եւ տուարեգ շատ ցանցառ բնակչությամբ: Առաջին երկու տարածաշրջաններում հայեր, իբրեւ հռոմեական եւ բյուզանդական զորքերի ստորաբաժանումների զինվորներ կամ դրանց հրամանատարներ, երբեմն հիշատակվում են պատմաբանների ու տարեգիրների աշխատություններում:

Տրիպոլիտանիան, իբրեւ Օսմանյան պետության տիրույթ, սուլթան Աբդուլ Համիդ Բ-ի ամենասիրած աքսորավայրն էր: Երկրի կլիման նպաստում էր նենգ ու խորամանկ սուլթանի՝ հակառակորդներից «բնական ճանապարհով» ազատվելու հեռահար նպատակին: Իր մյուս հակառակորդների շարքում՝ սուլթանն այստեղ էր աքսորել տալիս նաեւ իր հայազգի հպատակներին: Օրինակ, հայտնի է, որ 1894 թ. Սասունի ապստամբությունից հետո այստեղ աքսորում է եղել հնչակյան հայդուկապետ Համբարձում Բոյաջյանը (Մեծն Մուրադ): Թուրք, հայ եւ այլ ազգի հակասուլթանական աքսորականների մեծագույն մասը վերադարձավ Կոստանդնուպոլիս կամ իր ծննդավայրը՝ 1908-1909 թթ. երիտթուրքերի իշխանության գալով: Այդուհանդերձ, աքսորականներից մնաց մի փոքր տոկոս, որ ամուսնությունների կամ այլ կապվածությունների պատճառով մնայուն կերպով կայք հաստատեց այս երկրում: Դրանցից քրիստոնյաները որոշակի դիրքերի տիրացան 1911-1912 թթ. թուրք-իտալական պատերազմից հետո երկիրը գրաված իտալացի գաղութարարների տիրապետության ժամանակաշրջանում: Նրանց զգալի տոկոսը, այդ թվում՝ հայեր, հեռացավ երկրից՝ իտալական գաղութարարության փլուզումից եւ Լիբիայի անկախության հռչակումից հետո:

Հայտնի է նաեւ, որ Երկրորդ աշխարհամարտի տարիներին հազարավոր հայազգի երիտասարդներ են կռվել Լիբիայի հողում՝ դաշնակիցների բանակներում: Հատկապես մեծ է եղել ֆրանսիական Օտար լեգեոնի (Լեժիոն էթրանժեր) շարքերը կամավորապես (հիմնականում՝ ֆինանսական խայծը կուլ տալով) մտած հայ երիտասարդների թիվը, հավաքագրված մասնավորաբար Բեյրութից եւ Հալեպից: Օտարների շահերի համար մարտնչելով՝ այդ հայազգի երիտասարդներից շատերը կոտորվեցին լիբիական հողում, ոմանք գերեզման իսկ չունեցան:

Այդ կամավորներից՝ 1922 թ. ծնված հալեպցի Ասատուր Քեահքեճյանի հուշագրության մեջ հանդիպում ենք մի քանի թանկ տեղեկությունների: Գրելով հավանաբար 1943 թ. անցքերի մասին, նա անդրադառնում է վերջերս իրադարձությունների էպիկենտրոնում հայտնված բնակավայրերից Զավիա քաղաքում ֆրանսիական զորամասերի հետ իր անցկացրած հանգստի մասին: Նա գրում է.

«Ամէն շաբաթավերջ Թրիփոլիթէն կ՛իջնէինք: Հոն ծանօթացանք հայերու, որոնք 1905էն ի վեր բնակութիւն հաստատած էին Լիպիոյ մէջ: Անոնք Սուլթան (Ապտուլ) Համիտի հրամանագրով, որպէս քաղաքական դատապարտեալներ, աքսորուած էին հեռաւոր Թրիփոլիթէն:

Եկեղեցի չունէին, իրենց զաւակները հայերէն գրել-կարդալ չէին գիտեր: Մեծերը թէեւ խօսիլը չէին մոռցած, սակայն տրտմօրէն կը յայտնէին, թէ այս ընտանիքները կերթան դէպի ուծացում» (Ասատուր Քեահքէճեան, «Կամաւորի Մը Յուշերէն. 1942-1945», խմբագիր՝ Թորոս Թորանեան, հրատարակիչ՝ Կարպիս Վարդանեան, տպարան «Ոսկետառ», Հալէպ, 2010, էջ 58-59):

Ուշագրավ է այն փաստը, որ 1944 թ. սեպտեմբերի 12-ին ՀԽՍՀ իշխանությունների ստեղծած Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապի հայկական ընկերության (ծանոթ է իր ռուսերեն անվան հապավումով՝ ԱՕԿՍ) ավագ ռեֆերենտ Հր. Հովհաննիսյանը իր ղեկավարության ցուցումով պատրաստած եւ 1945 թ. հոկտեմբերով թվագրված «Տեղեկություններ արտասահմանի հայկական գաղթօջախների մասին» ռուսերեն փաստաթղթում (որը «սփյուռքահայության վերաբերյալ խորհրդային իշխանությունների կազմած առաջին փաստաթղթերից է», ինչպես նկատել է տալիս փաստաթուղթը առաջին անգամ հրատարակած պատմական գիտությունների թեկնածու Արմեն Բադալյանը) աֆրիկյան ցամաքամասից տեղեկություններ են տրվել միայն Եգիպտոսի ու Եթովպիայի մասին: Լիբիայի անունն առհասարակ չի հիշատակվել (փաստաթուղթը տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», թիվ 1 (115), 2010, էջ 139-157):

Լիբիայում հայերի գոյության մասին մեկ ուրիշ վկայության ենք հանդիպում Նյու Յորքից Հակոբ Վարդիվառյանի մի հուշապատումի մեջ: Գրելով Հունաստանի ՌԱԿ ղեկավարներից Առաքել Պետրոսյանի մասին՝ Հ. Վարդիվառյանը հայտնում է, թե Հունաստանի ՌԱԿ մեկ ուրիշ ղեկավար, 1955 թ. Թրիփոլիում գտնված Սիսակ Քաջիկյանի հետ Պետրոսյանի նամակագրությունից պարզվում է, թե «այդ օրերուն 60-70 հայեր կ՛ապրէին» Թրիփոլիի մեջ (Յակոբ Վարդիվառեան, «Յունահայ Ազգային Կուսակցական Գործիչ Ընկեր Առաքել Պետրոսեան», «Զարթօնք» օրաթերթ, Պեյրութ, 1 մայիս 2011, էջ 3):

Հայազգի արհեստավորներ Լիբիայում արտագնա աշխատանքի համար հայտնվեցին մասնավորապես 1970-1980-ական թվականներին: Լիբիայում որոշ արտոնյալ դիրքում էին սիրիացի արհեստավորները (1974 թ. Սիրիան, Եգիպտոսն ու Լիբիան կազմավորել էին «Արաբական հանրապետությունների միություն» կոչված համադաշնությունը, որը շատ շուտով փուլ եկավ Եգիպտոսի նախագահ Անվար Սադաթի՝ Իսրայելի հետ միայնակ խաղաղություն կնքելուն ուղղված քայլերի պատճառով): Սիրիահայ արհեստավորները համարյա բոլորն էլ 1990-ականներին դուրս եկան Լիբիայից ֆինանսական որոշակի կարողություն ստեղծելուց հետո:

Հետաքրքրական է այն տեղեկությունը, որը մի քանի ամիս առաջ՝ լիբիական իրադարձությունների սկզբին ինձ փոխանցեց Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի (ԱՍԱԼԱ) լավատեղյակ նախկին մեկ անդամը՝ Բեյրութում: Ըստ նրա, 1980-ականների սկզբին Մուամմար Քադդաֆիի հետ ԱՍԱԼԱ-ի հիմնադիր-ղեկավար Հակոբ Հակոբյանի (իսկական անունը՝ Հարություն Թագուշյան) հերթական մեկ հանդիպմանը ներկա է գտնվել Լիբիայի զինված ուժերի մի գեներալ: Նրան ցույց տալով, Քադդաֆին ասել է, թե նա հայ է: ԱՍԱԼԱ-ականների կասկածանքը փարատելու համար, գնդապետը հրահանգել է գեներալին (բռնատիրական երկրներում այդպես էլ է լինում...)՝ ցույց տալ անձը հաստատող փաստաթուղթը: ԱՍԱԼԱ-ականները կարդացել են ազգանունը՝ կազմված հայկական անձնանունից: Գեներալը հայերեն մեկ բառ իսկ չի իմացել, առաջին անունն էլ արաբական է եղել: Նա վկայել է, թե իր պապը Աբդուլ Համիդի ժամանակ Լիբիա աքսորված հայ է եղել:

Որքա՞ն է հավաստի այս տեղեկությունը, եւ եթե իրոք ճիշտ է, հետաքրքրական կլիներ իմանալ, թե այդ հայազգի գեներալը կա՞ նաեւ այսօր, ընդգրկվա՞ծ է արդյոք Լիբիայի քաղաքացիական պատերազմում, եւ, վերջապես, ո՞ւմ կողքին է դիրքորոշված՝ Քադդաֆիի՞, թե՞ ապստամբների...

Ամեն դեպքում, Լիբիայում տեղաբնակ հայության մասին հաղորդող շատ քիչ աղբյուրները հայտնում են հայերի՝ միայն Թրիփոլի քաղաքում հաստատված լինելու մասին: Իսկ այս քաղաքը Մուամմար Քադդաֆիի ու նրա կողմնակիցների իշխանության տակ է: Հետաքրքրական է իմանալ, թե քաղաքում մնացած եւ հայկական արյուն կրող սակավաթիվ մարդիկ ո՞ւմ կողմն են դիրքորոշվել վերջին ամիսներին երկիրը լափող քաղաքացիական պատերազմում:

ԳԵՎՈՐԳ ՅԱԶԸՃՅԱՆ





# Հանգանակութիւն Տիգրանակերտի Ս. Կիրակոս եկեղեցւոյ վերակառուցման համար

**Առաջին անգամ ըլլալով նման հաւաքոյթի մը ներկայ ըլլալու առիթն էր, որ ստեղծած էին տիգրանակերտցի հայերը, որոնք ոչ միայն մեծ թիւ մը կը կազմեն Նիւ Եորքի շրջանին մէջ, այլեւ՝ ազգային կեանքէն ներս գրաւած են բաւականին ազդեցիկ դիրքեր: Ընդհանրապէս անոնք յաջողած ազգայիններ են իրենց ասպարէզներէն ներս:**

**Հաւանաբար առաջին նման երեւոյթ մըն էր այս հանգանակութիւնը, որովհետեւ պատմական Հայաստանի վրայ Կոստանդնուպոլսոյ Հայ Պատրիարքութեան իրաւասութեան ենթակայ պատմական հայկական եկեղեցի մըն է, որ պիտի վերանորոգուի հայ եւ թուրք (քիւրտ) միացեալ ջանքերով: Տիարպեքիրի, ինչպէս այսօր զայն կը կոչեն, քաղաքապետը եւս կը բերէ մասնակցութիւն անոր վերանորոգման աշխատանքներուն, անշուշտ զբօսաշրջիկութեան հեռանկարներէ թելադրուած:**

**Սուրբ Կիրակոս եկեղեցւոյ պարագան բոլորովին տարբեր է Վանի Աղթամարի Ս. Խաչ եկեղեցւոյ պարագայէն, որովհետեւ Տիարպեքիրի եկեղեցւոյ տէ՛րը հայութիւնն է: Ս. Կիրակոս եկեղեցին կը դասուի Միջին Արեւելքի մեծագոյն քրիստոնեայ աղօթատեղին, որ ունի եօթը խորան: 1515-ին Ս. Թադէոս եկեղեցին մզկիթի վերածուելէն ետք, Ս. Կիրակոսը կառուցուած է անոր գերեզմանատան մէջ եւ եղած՝ առաջնորդանիստ քարաշէն հոյակապ եկեղեցի մը: Դարերու ընթացքին ընդարձակուած ու նորոգման ենթարկուած է յաճախ: Եկեղեցւոյ պատերուն վրայ կան արձանագրութիւններ կառոյցին մասին: 1915-ին, 20 մեթր բարձրութեամբ զանգակատունը, Զիլճեաններու ձուլած կոչնակով եւ իր ոսկեայ խաչով հանդերձ թնդանօթ հարուածով կը փլցուի՝ շրջակայ մզկիթներու մինարէներէն աւելի բարձր ըլլալուն պատճառով:**

**Աւելի քան 350 հանդիսականներու մէջ ներկայ էին ՄԱԿ-ի մօտ ՀՀ հաւատարմատար Կարէն Նազարեան, ծանօթ ազգային բարերարներ Հրաչ Թուֆայեան, Սարգիս Պետեւեան, Տոքթ. Րաֆֆի Յովհաննէսեան, Աթընըզեան եղբայրներ՝ Պոստոնէն, ինչպէս նաեւ ներկայացուցիչներ ՌԱԿ-էն՝ ընկեր Փանոս Թիթիզեան եւ ՀՅԴ-էն՝ Հրայր Պարոնեան:**

**Ամերիկայի Արեւելյան թեմի առաջնորդ Խաժակ արք. Պարսամեան կատարեց բացման խօսքը եւ քաջալերեց ներկաները մասնակցելու նուիրահաւաքի սրբազան գործին:**

**Օրուան հանդիսութիւնը վարեց Հրանդ Կիւլեան, ինք եւս տիգրանակերտցի եւ այս ճաշկերոյթը կազմակերպող յանձնախումբին ատենապետը: Հրաւիրուեցաւ խօսելու Ս. Կիրակոս եկեղեցւոյ հոգաբարձութեան ատենապետ Վարդգէս Էրկիւն Այիք, որ տուաւ պատմականը եկեղեցւոյ, ինչպէս նաեւ շեշտեց նման հայկական կոթողներու պահպանման կարեւորութիւնը բովանդակ պատմական Հայաստանի տարածքին, շեշտակիօրէն ցոյց տալու օտարներուն մանաւանդ՝ Ցեղասպանութենէն առաջ մեծ թիւով հայութեան մը ապրած ըլլալու փաստը հոն: Տեսաերիզով ան տուաւ լայն բացատրութիւններ կառոյցին, ինչպէս նաեւ՝ նախաձեռնած շինարարական ծախսերուն մասին տեղեկութիւններ:**

**Թուրք ուսումնասիրող Օսման Քէօքէր իր կարգին ներկայացուց պատմական վաւերական նկարներով անցեալի Տիգրանակերտը, տալով բացատրութիւններ: Ան հեղինակն է ծանօթ այն ալբոմին, ուր ներկայացուած է Օսմանեան կայսրութեան շրջանի հայկական յուշակոթողներու, ազգային հաստատութիւններու եւ հայ բնակավայրերու լուսապատկերները փոստային բացիկներու վրայ:**




*Զանգակատունը:*

**Խօսք առաւ նաեւ Ուաշինկթընի մօտ առաջնորդական նուիրակ Վիգէն արք. Այքազեան, որ ծանօթացուց պատրիարքական փոխանորդ Արամ արք. Աթէշեանը, որ այս առթիւ յատկապէս եկած էր նախագահելու հաւաքոյթը:**

**Աթէշեան սրբազան, ինք եւս տիգրանակերտցի, կու տայ ոդիսականը վանքին: Իր միջոցներով ու նախաձեռնութեամբ ալ ճամբայ ելած այս մեծ աշխատանքը իր լրումին պիտի հասնի յառաջիկայ տարի: Թէեւ մէկ-երկու հայեր մնացած են Տիգրանակերտի մէջ, սակայն յոյսով է, որ իսլամացած շատ հայեր պիտի վերադառնան իրենց ազգութեան եւ խոստացաւ վերաբացման եւ վերաօծման օրը 4-5 երախաներու մկրտութիւնը ընել: Յիշեց որ իր հարազատներէն քանիներ իսլամացած են եւ կ՛ուզեն վերադառնալ ազգային մեր եկեղեցիին: Յոյսով է ան, որ եկեղեցւոյ մկրտութեան աւազանը, որ տասնամեակներէ ի վեր չորցած է, դարձեալ պիտի օրհնուի միւռոնով:**

**Պաշտօնական յայտագրի աւարտին, տիգրանակերտցիներու կողմէ սիրուած երգիչ Օննիկ Տինքճեան եւ իր նուագախումբը հրամցուցին Տիգրանակերտի տոհմիկ պարն ու երաժշտութիւնը եւ ներկաները լեցուցին սրահը ազգային ոգիով ու շունչով: Ու այս ամէնուն հետ հրամցուեցաւ Տիգրանակերտի ազգային խոհանոցը՝ իր նշանաւոր տոլմայով:**

**Հպարտութեան առիթ մը ստեղծեց երեկոն տիգրանակերտցիներուն համար եւ մեզի համար ալ՝ ծանօթանալու Տիգրանակերտի պատմութեան:**

**Վստահաբար, յառաջիկայ տարի Տիգրանակերտը պիտի դառնայ ժամադրավայրը բոլոր անոնց, որոնք կ՛ապրին արտասահման, ներկայ ըլլալու Ս. Կիրակոս եկեղեցւոյ վերաօծման հոգեպարար արարողութեան:**

ՅԱԿՈԲ ՎԱՐԴԻՎԱՌԵԱՆ
Նիւ Ճըրզի



*Եոթ խորաններից մեկը:*

# Ադրբեջանը «կրկին կողմնորոշվում է»

Ըստ երեւույթին, Իլհամ Ալիեւը մտադիր է հերթական անգամ արտաքին քաղաքական «խաղեր տալ»: Որոշ ժամանակ առաջ փորձագետ Զարդուշտ Ալիզադեն կարծիք էր հայտնել, որ Արեւմուտքը դժվարանում է բավարարել պաշտոնական Բաքվի առաջադրած` «գազի եւ նավթի դիմաց` լոյալություն վարչակազմի հանդեպ, գումարած` Լեռնային Ղարաբաղը» նախապայմանը: «Նախապայմանի» մասով թերեւս արժե վերապահում անել, բայց որ Իլհամ Ալիեւը նման ցանկություն կունենա, դա կասկած չի հարուցում:

Խնդիրն այն է, թե Արեւմուտքն «ինչո՞ւ է դժվարանում» հարաբերություններ կառուցել այդ կտրվածքով: Պատճառները կարող են շատ լինել, բայց գլխավորը թերեւս այն է, որ ամեն պարագայում Ադրբեջանը պարզապես պարտադրված է վաճառահանել իր բնական պաշարները, այլապես կմատնվի սոցիալական աղետի: Իշխանություններն իրենք էլ հասկանում են, որ այլ ելք չունեն: Մանավանդ կարծես հետդարձի ճանապարհ էլ չի ուրվագծվում. Ադրբեջանի ողջ տնտեսական համակարգը կախված է արեւմտյան ներդրումներից:

Այդուհանդերձ, Իլհամ Ալիեւը մտադիր չէ ժողովրդավարական բարեփոխումների հարցում ընդառաջել Արեւմուտքի հորդորներին: Պատասխանելով հարցին, թե արդյոք Եվրախորհրդարանի բանաձեւը չի՞ ազդի Ադրբեջան-Արեւմուտք հարաբերությունների վրա, քաղաքագետ Ռասիմ Մուսաբեկովը կարծիք է հայտնել, որ «Եվրոհանձնաժողովն ավելի պրագմատիկ է»: Ակնարկվում է, որ նկատի ունենալով տնտեսական խնդիրները, Եվրոհանձնաժողովը «կարող է աչք փակել» այն թերությունների հանդեպ, որ մատնանշված են Եվրախորհրդարանի մայիսի 12-ի բանաձեւում:

Մուսաբեկովն, այսպիսով, սեփական երկրի ցինիզմը փորձ է անում վերագրել Եվրոպային, բայց դա ավելի շուտ ինքնահանգստացում է, քան` «փաստի» արձանագրում: Այս իրավիճակի բավական դիպուկ բնութագիրն է տալիս Pia.az-ը` խտացնելով, որ «պաշտոնական Բաքուն օրինականացնում է Արեւմուտքի հետ քարոզչական պատերազմը»:

Լրատվամիջոցը մատնանշում է հատկապես կառավարող կուսակցության բարձրաստիճան ներկայացուցիչների կողմից «Ադրբեջանի ներքին գործերին չխառնվելու» մասին Եվրախորհրդարանի եւ արեւմտյան իրավապաշտպան կազմակերպությունների հասցեին ինչեցրած հորդորներն ու զուգահեռաբար «դեպի Ռուսաստան արվող ռեւերանսները»: Նման բան, ի դեպ, նկատելի է նաեւ հարեւան երկրի քաղաքագետների գնահատականներում:

Հատկապես ընդգծվում է Միացյալ Նահանգների հետ համատեղ զորավարժության չեղյալ հայտարարելը: «Դրա փոխարեն իշխանությունն արդեն երկրորդ զորավարժությունն է անցկացնում մերձճակատային գոտում», դիտել է տալիս ադրբեջանական տեղեկատվական-վերլուծական կայքը` բխեցնելով, թե «դա ոչ այնքան ադրբեջանական բանակի հզորության ցուցադրում է, որքան` Վաշինգտոնին հասցեագրված դիվանագիտական դեմարշ»:

Վերջին գնահատականն, անկասկած, խիստ չափազանցված է կամ որոշակի ինտրիգ է պարունակում: Այդուհանդերձ, մեկնաբանն ավելացնում է, որ «ԱՄՆ-ը համատեղ զորավարժություններից մի քիչ առաջ Ադրբեջանի իշխանություններից պահանջել է արմատական քաղաքական փոփոխություններ նախաձեռնել», ինչը չի ընդունվել:

Շատ հետաքրքրական է, որ նման վերլուծությունն ուղեկցվել է նաեւ Ադրբեջան-Վրաստան հարաբերությունների վատթարացման հեռանկարի կանխատեսումով: Մատնանշվել է հատկապես Վրաստանի իշխանությունների` երկրի իսլամադավան բնակչությունը «Բաքվի ազդեցությունից դուրս բերելուն ուղղված վերջին քայլը»:

Բանն այն է, որ վերջերս Վրաստանում պետական գրանցում է ստացել մի հասարակական կազմակերպություն, որն, ըստ կանոնադրության, պետք է զբաղվի իսլամադավան բնակչության «հոգեւոր կարիքներին առնչվող հարցերի լուծմամբ»: Մինչ այդ նման գործառույթ իրականացնում էր Կովկասի մուսուլմանների հոգեւոր առաջնորդության Վրաստանի մասնաճյուղը, որի ղեկավարն էթնիկ ադրբեջանցի է: Պետական գրանցում ստացած ՀԿ ղեկավար է ընտրվել, մինչդեռ, ազգությամբ աջար, կազմակերպության վարչության կազմում նույնպես ադրբեջանցի չկա:

Այս փաստը հարուցել է Կովկասի մուսուլմանների հոգեւոր առաջնորդ Փաշազադեի դժգոհությունը, որ չի զլացել այդ մասին բարձրաձայնել մի հոգեւոր համաժողովի ժամանակ, որին մասնակցել են Ռուսաստանի Դաշնության հյուսիսկովկասյան իսլամադավան ինքնավարությունների ներկայացուցիչները: Pia.az-ն, ընդ որում, հարմար է գտել նույն համատեքստում շեշտել, որ Վրաստանը վերջին ժամանակներս խիստ կարեւորում է Ադրբեջանի` Ռուսաստանին սահմանակից շրջաններում բնակվող իսլամադավան վրացիների «հասարակական եւ քաղաքական ինտեգրման», ինչպես նաեւ երկու հանրապետությունների միջեւ վեճի առարկա հանդիսացող քրիստոնեական Դավիթ Գարեջի վանական համալիրի նկատմամբ վերահսկողության հարցերը: Ընդ որում, ադրբեջանցի վերլուծաբանի հայացքով` Վրաստանի «դիրքորոշման անսպասելի կոշտացումը պայմանավորված է Թբիլիսիի վրա Վաշինգտոնի ազդեցությամբ»:

Պատկերն ավելի է խտացրել «Ենի մուսավաթ» պարբերականը, որի «հավաստի տեղեկություններով մոտ ապագայում ռուս-ադրբեջանական բանակցություններ կսկսվեն` Գաբալայի ռադիոտեղորոշիչ կայանի հարցով»: Ինչպես հայտնի է, այդ կայանը Ռուսաստանի Դաշնությունն օգտագործում է վարձակալության հիմունքներով:

Այդ մասին կողմերի միջեւ ստորագրված պայմանագրի ժամկետը լրանում է 2012թ. հունվարին: Վկայակոչելով ԱՊԱ գործակալության «վստահելի աղբյուրներից մեկը», թերթը գրում է, որ պայմանագրի ժամկետն ամենայն հավանականությամբ կերկարաձգվի: Ըստ այդմ, նոր պայմանագիրը «Միլլի մեջլիսի վավերացմանը կներկայացվի արդեն տարեվերջին, իսկ 2012-ի մարտին կմտնի ուժի մեջ»: Ընդ որում, ինչպես եզրահանգում է «Ենի մուսավաթ»-ը, Գաբալային կարող է տրվել «Ադրբեջանում ՌԴ ռազմական հենակայանի կարգավիճակ»:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# ԱՄՀ ղեկավարի պաշտոնի հավանական թեկնածուն Քրիստին Լագարդն է

*Ստրոս-Կանը հրաժարական է տվել*



Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) ղեկավարի պաշտոնի առավել հավանական թեկնածուն Ֆրանսիայի ֆինանսների նախարար Քրիստին Լագարդն է: Նվազ հավանական թեկնածու է համարվում Գերմանիայի ԿԲ նախկին տնօրեն Ակսել Վեբերը: Այդ մասին հաղորդում է բրիտանական «Դեյլի թելեգրաֆ» թերթը:

ԱՄՀ նոր ղեկավար ընտրելու անհրաժեշտությունը ծագեց երեկ, երբ հրաժարական տվեց կազմակերպության ներկայիս գլխավոր տնօրեն Դոմինիկ Ստրոս-Կանը: Նա Նյու Յորքում կալանքի տակ է մայիսի 14-ից, երբ օդանավ էր նստել Փարիզ թռչելու համար: Անցած օրերին նրա պարտականությունները ժամանակավորապես կատարում էր առաջին տեղակալ Ջոն Լիպսկին: Ստրոս-Կանը ամբաստանվում է Sofitel հյուրանոցի սպասավորուհիներից մեկի հանդեպ սեռական ոտնձգության փորձի համար: ԱՄՀ-ում Ստրոս-Կանի պաշտոնավարության ժամկետը պետք է ավարտվեր 2012-ի աշնանը: Մայիսի 20-ին նշանակված է դատական նիստ, որտեղ երդվյալների մեծ կոլեգիան կվճռի, թե պե՞տք է արդյոք դատավարություն անցկացնել ԱՄՀ ղեկավարի գործով:

Ամերիկյան լրատվամիջոցները կցկտուր տեղեկություններ են հաղորդում Ստրոս-Կանի կալանավորման պատճառ դարձած 32-ամյա սպասավորուհու մասին, չնշելով նրա անունը: Առայժմ հայտնի է, որ նա սեւամորթ է, ունի 15-ամյա դուստր, 7 տարի առաջ ԱՄՆ է ներգաղթել Գվինեայից: Որոշ տեղեկությունների համաձայն, այդ կինը վերջին տարիներին բնակվել է ՁԻԱՀ-ով հիվանդների համար նախատեսված շենքում: Նրա փաստաբանը պնդում է, թե սպասավորուհին իբր միջադեպից մեկ օր հետո է իմացել հյուրանոցի կենվորի ինքնությունը:

Համաշխարհային քաղաքականության մեջ առկա չգրված կանոնների համաձայն, ԱՄՀ ղեկավարի պաշտոնը պետք է զբաղեցնի եվրոպացի, իսկ Համաշխարհային բանկի ղեկավարինը` ամերիկացի:

Քրիստիան Լագարդի թեկնածությունն արդեն պաշտպանել են մի շարք քաղաքական գործիչներ, այդ թվում` Շվեդիայի ֆինանսների նախարար Անդերս Բորգը: Այդ մասին հաղորդում է «Սքայ նյուզ» հեռուստաընկերությունը: Ընտրվելու դեպքում Լագարդը կդառնա ԱՄՀ առաջին կին ղեկավարը:

Ինչ վերաբերում է Ակսել Վեբերին, նա համարվում էր Եվրամիության ԿԲ ղեկավարի պաշտոնի հիմնական թեկնածուն, բայց 2011-ի սկզբներին անսպասելիորեն թողեց Գերմանիայի ԿԲ տնօրենի պաշտոնը:

## ԱՐԴԵՆ ԲԱՑԱՀԱՅՏ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

# Օբաման հրապարակեց արաբական երկրների ժողովրդավարացմանն աջակցելու ծրագիրը

**ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման երեկ հրապարակել է արաբական երկրների ժողովրդավարական փոփոխություններին տնտեսապես աջակցելու բազմամիլիարդանոց ծրագրի որոշ մանրամասնություններ: Նախագահը ելույթ է ունեցել Պետդեպարտամենտում` խոսելով 2011-ի արաբական մի շարք երկրների հեղափոխությունների եւ հակակառավարական հուզումների նկատմամբ ԱՄՆ-ի դիրքորոշման մասին:**

**Օբամայի ծրագիրը մասնավորապես նախատեսում է պարտքերի դուրսգրում, ներդրումային ֆոնդերի կազմակերպում, վարկերի հատկացում ենթակառույցի զարգացման եւ նոր աշխատատեղերի ստեղծման համար: Միայն Թունիսն ու Եգիպտոսը կստանան 1 մլրդ դոլար օգնություն, ինչպես նաեւ կմեղմացվեն պարտքերի մարման պայմանները, հաղորդում է Ֆրանսպրեսը:**

**Ամերիկացի պաշտոնյաների կարծիքով, նման օժանդակությունը խթան կդառնա արաբական աշխարհի նաեւ մյուս պետություններում ժողովրդավարական կարգի հաստատման համար:**

**Մեկնաբանները զուգահեռներ են անցկացնում արաբական երկրներին աջակցելու ամերիկյան ծրագրի եւ սոցիալիստական վարչակարգի անկումից հետո Արեւելյան Եվրոպայի տնտեսությունը զարգացնելու սխեմայի միջեւ: Մասնավորապես նախատեսվում է օգտագործել Վերակառուցման ու զարգացման եվրոպական բանկի հնարավորությունները:**

**Թունիսում եւ Եգիպտոսում 2011-ի փետրվարին հակակառավարական բազմահազարանոց հանրահավաքներն ու ցույցերը այդ երկրների երկարամյա նախագահներին ստիպեցին հրաժարական տալ: Վերջին ամիսներին ԱՄՆ-ը արդեն միլիոնավոր դոլարների օգնություն է հատկացրել Եգիպտոսին եւ Թունիսին, ինչպես նաեւ Քադդաֆիի դեմ մարտնչող լիբիացի ապստամբներին:**

# Պատժամիջոցներ Ասադի եւ սիրիացի այլ պաշտոնյաների դեմ



**ԱՄՆ իշխանությունները որոշել են պատժամիջոցներ ձեռնարկել Սիրիայի նախագահ Բաշար Ասադի եւ 6 ուրիշ բարձրաստիճան պաշտոնյաների դեմ: ԱՄՆ-ում պահվող նրանց բոլոր ակտիվները կսառեցվեն, նշում է Ռոյթեր գործակալությունը:**

**Ամերիկացիներն այդ ձեւով փորձում են ազդել Սիրիայի ղեկավարության վրա:**

**Ասադից բացի, պատժամիջոցները վերաբերում են փոխնախագահ Ֆարուկ ալ Շարաային, վարչապետ Ադել Սաֆարին, ներքգործնախարար Մոհամմադ Իբրահիմ ալ Շաարին, պաշտպանության նախարար Ալի Հաբիբին, ինչպես նաեւ ռազմական հետախուզության ղեկավար Աբդուլ Ֆաթահ Կուդսիային եւ քաղաքական անվտանգության վարչության տնօրեն Մոհամմեդ Դիբ Զեյթունին:**

**Ավելի վաղ` մայիսի 9-ին Սիրիայի դեմ պատժամիջոցներ ձեռնարկել էր Եվրամիությունը: Մասնավորապես արգելվեց սիրիացի 13 պաշտոնյաների մուտքը ԵՄ, եւ սառեցվեցին նրանց ակտիվները:**

**Իրավապաշտպանների տվյալներով, Սիրիայում մարտին սկսված բողոքի ցույցերի ընթացքում սպանվել է 700 հոգի, որոնցից 100-ը` ոստիկան եւ զինվորական:**

**Մայիսի 13-ին հայտնի դարձավ, որ նախագահ Ասադը բանակին հրամայել է այլեւս մարտական զենք չգործադրել ցուցարարների դեմ:**

# Արգենտինայում օդանավ է ընկել




Երեկ առավոտյան Արգենտինայի հարավում ընկել եւ ջախջախվել է ներքին չվերթեր իրականացնող Sol ավիաընկերության օդանավերից մեկը: Ռոյթեր գործակալության տվյալներով, SAAB-340 մարդատար օդանավում եղած բոլոր 22 անձինք (19 ուղեւոր եւ անձնակազմի 3 անդամ) զոհվել են:

Արգենտինական C5N հեռուստաալիքը հաղորդում է, որ աղետը տեղի է ունեցել մայրաքաղաք Բուենոս Այրեսից 1850 կմ հարավ-արեւմուտք: 40-տեղանոց SAAB-340 օդանավը վաղ առավոտյան Նեուկեն քաղաքից թռչում էր դեպի Կոմոդորո-Ռիվադավիա: Դա նավթի ու գազի ընկերության աշխատակիցների չարտերային չվերթ էր:

Մեկնումից 45 րոպե անց օդաչուն վերջին անգամ կապ է հաստատել դիսպետչերի հետ` հայտնելով շարժիչի անսարքության մասին: Ավելի ուշ օդանավն անհետացել է ռադարների էկրաններից եւ ի վերջո ընկել ու պայթել է Պրաուանիեու ավանի մոտակայքում:

Շվեդական SAAB կոնցեռնը տուրբինապտուտակային SAAB-340 օդանավեր արտադրել է 1980-ականների կեսերից մինչեւ 1990-ականների վերջը: Այդ օդանավը թողարկվում էր բեռնատար եւ մարդատար տարբերակներով:

ԱԶԳ

# Մշակույթ

Այս տարուան ապրիլ ամսուան վերջին շաբաթը հայ երաժշտութեան տօնն էր Փարիզի մէջ:

Արդարեւ, հինգշաբթի 20 ապրիլ 2011-ին տեղի ունեցաւ Հայաստանի Հանրապետութեան 20-րդ տարեդարձին նուիրուած նուագահանդէսը, Saint Louis des Invalides տաճարին մէջ, Ֆրանսայի ազգային ոստիկանական փողային մեծ նուագախումբին եւ մենակատարներու կատարմամբ:

Համերգը սկսաւ Արամ Խաչատուրեանի աշխարհահռչակ «Գայիանէ» պալէի շարանուագով: Սակայն դադարի՝ attaca-ներով: Մենակատար Guy TOUVRON չկարողացաւ յստակօրէն հնչեցնել «բաղադրումները» -chromatisme- կիսաձայներու դժուար յաջորդականութիւնը եւ նրբօրէն արտայայտել շեփորի ձայնային ախորժալուր հնչողականութիւնը: Այնուամենայնիւ գոհացուցիչ էր իր ամբողջականութեան մէջ:

Միջնադադարէն յետոյ համերգը շարունակուեցաւ Շոստակովիչի դաշնամուրի եւ նուագախումբի համար N 2 մրցանուագով concerto-, Վահան Մարտիրոսեանի փազանցութեան պատճառաւ՝ բեմելէն սկսեալ մինչեւ համերգին վերջաւորութեան: Գրած էի նաեւ (տես Փարիզի «Յառաջ» օրաթերթի 4 հոկտեմբեր 2003 թիւը) «... Եւ թերեւս լաւ պիտի ըլլար եթէ ՉՂԵԿԱՎԱՐԵՐ...»: Եւ այսօր, 2011 թուականին, կը կարդամ պոլսահայ թերթերուն մէջ հետեւեալը. « Նուագախումբը կը շարունակէ իր գործունէութիւնը համերգ մը տալով ԱՌԱՆՑ ԽՄԲԱՎԱՐԻ»: Bonjour, ո՞ւր էիք, ախպեր ջա՜ն...

Այսուհանդերձ կը գնահատեմ Արամ Ղարաբեկեանի տարած հս-

## Հայաստանի անկախութեան 20-ամեակին նուիրուած նուագահանդէս

ի սկզբանէ ակնյայտ էին կտորի տատանումները, «խորտուբորտ» երեւոյթները: Կը խորհիմ թէ նուագավարը բնազդային զգացողութեան պակասը ունէր՝ խաչատուրեանական բարդ եւ ուժական բազմակշռոյթներու ջղէժային յորդահոս ժայթքումներու առումով: Հակառակ այս ամենուն պիտի խոստովանիմ՝ որ ան օժտուած է բեմական հմայքով եւ յուզումներ արտայայտող ձեռքերով:

Այս շարանուագի մէջ կը մտնէր «Danse des Jeunes Filles» եւ «Berceuse», որոնք ընթացան լաւ եւ մաքուր նուագակցութեամբ: Գալով «Danse du Sabre» եւ «Danse Russe» կտորներուն, անոնց մեկնաբանութիւնը եւ նուագակցութիւնը յաջող չէր:

Այնուհետեւ նուագահանդէսը շարունակուեցաւ Ալեքսանդր Յարութիւնեանի ամենահռչակաւոր «Շեփորի քոնչերթօ»ով:

Ա. Յարութիւնեանի այս երաժշտական յօրինուածքը ներշնչուած է հայկական ժողովրդական աւանդական երաժշտութեան անաղարտ, պարզ ու զուլալ գեղջկական մեղեդիներէ եւ կտորներէ՝ համեմուած աշուղական ոգիով եւ բոյրով:

Երկը բաղկացած է երեք մասերէ, որոնց անցումները կ'ըլլան առանց հիասքանչ մեկնաբանութեամբ:

Նստած ըլլալով որպէս ունկնդիր ոչ շատ հեռու, կը զարմանայի եւ միեւնոյն ժամանակ կը հիանայի այս զօրեղ արտաքինով դաշնակահարին հիանալի ոչ միայն «թեքնիքին», այլ նաեւ յստակօրէն իր զգայուն մատներու հպումներով ստեղնաշարին: Անմիջապէս նկատելի էր բարձր արհեստավարժութիւնը:

Նշենք, որ Շոստակովիչի այս գործը յատկանշական է իր կարճ տեւողութեամբ:

Որոտընդոստ ծափերը Վահանին ստիպեցին մեկնաբանել նաեւ Պապաճանեանի «Toccata»ն, բուռն եւ փայլակնացայտ մեկնաբանութեամբ:

Յուսամ յետագային կրկին առիթը կ'ունենամ անդրադառնալու մեծատաղանդ դաշնակահար Վահան Մարտիրոսեանի կատարողական վերելքին, թէ՛ իբրեւ դաշնակահար եւ թէ՛ իբրեւ ղեկավար:

Այս առթիւ տեղին է ուրախութեամբ նշել, որ Վահան Մարտիրոսեանը վերջերս նշանակուած է Հայաստանի պետական կամերային նուագախումբի գլխաւոր ղեկավար: Ժամանակին, 2003 թուականէն սկսեալ, նախկին ղեկավարը քննադատած էի անոր «ծիծաղաշարժ դառնալու աստիճան» անտեղի խորթ շարժումներուն չակայ ու քաջ աշխատանքը Հայաստանի երաժշտութեան բնագաւառին մէջ, ամենէն ճգնաժամային շրջանին, ուր արուեստը անկումի մէջ էր...

Նուագահանդէսը վերջացաւ ամերիկացի երաժշտահան Alfred REED-ի գործերով: Ան մասնագիտացած է մանաւանդ երաժշտական մշակումներու ոլորտին մէջ, ինչպէս են այս երկու հայկական պարերը՝ «Խումար» եւ «Լոռիի Հորովել»ը, որոնք երաժշտական էին եւ հաճելի՝ ունկնդրելու համար:

Ազգային ոստիկանական փողային նուագախումբը կազմուած է փայտեայ եւ պղնձեայ փողայիններէ, հարուածայիններէ եւ բամբջութակներէ contrebasse-: Հետաքրքրական բարձր որակով հարուստ համոյթ մըն է, բաղկացած գրեթէ 90 արհեստավարժ երաժիշտներէ:

Յայտնի է, որ շատ նուագավարներ դժուարութիւն կ'ունենան՝ կապուած շեփորներու խլացուցիչ ծղրտացող ձայներէն: Նուագավար Jrtme HILAIRE յաջողեցաւ զսպել շեփորահարներու խեղդող ուժականութիւնը:

Գեղեցիկ, հոգեպարար, յուզումնախառն երեկոյթ մըն էր:

**ԲԺ. ԼԵՒՈՆ ՄՈՄՃԵԱՆ**
**Փարիզ**

## Նորից Ժնեւի գրքի միջազգային ցուցահանդեսին հայկական մասնակցության մասին

**«Ազգ»**-ը արդեն երկու անգամ անդրադարձել է Ժնեւի գրքի միջազգային ցուցահանդեսում հայկական մասնակցությանը, հայկական տաղավարի գտած հաջողությանը, շեշտելով, գլխավոր դոնոր կազմակերպությունների՝ Հայկական բարեգործական ընդհանուր միության եւ Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության հայկական բաժանմունքի արդյունավոր գործունեության կողքին, շվեյցարահայ համայնքի հրաշալի աշխատանքը՝ գլխավորությամբ գաղութի պատասխանատուներից Վահե Կաբրաճի: Երեկ տեղեկացանք, որ Ժնեւի գրքի միջազգային ցուցահանդեսի նախագահ, Շվեյցարիայի ռադիոհեռուստատեսության պետական ընկերության տնօրեն **Փաթրիկ Ֆերլան** շնորհակալության ու դրվատանքի տողերով լեցուն նամակ է հղել պրն Վահե Կաբրաճին, մասնավորապես նշելով.



*«Սիրելի Վահե,*

*Սույն մի քանի տողերը գրում եմ քեզ հայտնելու համար, որ ցուցահանդեսի ընթացքում ստեղծված մեր համագործակցությունը իրոք երջանկություն էր ինձ համար: Շնորհակալություն եմ հայտնում քեզ այն ամեն ինչի համար, որ նախաձեռնեցիր. սքանչելի հաջողություն, գրքի օրհնակելի տաղավար՝ մեծ գեղեցկությամբ եւ հազվագյուտ հարստությամբ:*

*Գրական հանդիպումների վարիչ Ալեն Նավարան (ի դեպ՝ մոր կողմից հայ- Ծ.Խ.) իսկապես մեծ վարպետությամբ ընդունեց եւ վարեց բոլոր հանդիպումները: Հրճվում եմ կանխավ, որ հետագայում քեզ հետ հանդիպելու եմ կրկին եւ միասին գործունեություն ծավալելու: Այս նախաձեռնությունը (ցուցահանդեսում հայկական տաղավարի կազմակերպումը նկատի ունի.- Ծ.Խ.) իր հայտնի տեղն է ունենալու ցուցահանդեսի պատմության մեջ:*

*Ջերմ բարեկամությամբ՝*

**ՓԱԹՐԻԿ ՖԵՐԼԱ)):**

ԼՈՒՐԵՐ

## Մեծարել են երաժշտագետ Վաչե Պարսումյանին

**Լոս Անջելեսի Կալիֆոռնիա համալսարանի «Հայոց լեզվի եւ մշակույթի ուսումնասիրության բարեկամները» կազմակերպությունը համալսարանի հավանությանն արժանացած մի աջակից մարմին է, որը Նարեկացի Ամբիոնի համագործակցությամբ խրախուսում է հայոց լեզվի, գրականության եւ մշակույթի տարածմանը: Ավանդական դարձած ամենամյա խրախճանք-հավաքի ընթացքում կազմակերպությունը «Ձեռքբերումների Նարեկացի մեդալով» է պարգեւատրում այդ ասպարեզում իրենց ներդրումն ունեցող մի անձնավորության:**

**Ապրիլի 3-ին կայացած այս տարվա ընդունելության ժամանակ այդ մրցանակը շնորհվել է վաստակաշատ երաժշտագետ-երգահան եւ դիրիժոր Վաչե Պարսումյանին, որը Գլենդեյլի «Լարք երաժշտական ընկերության» հիմնադիրն ու տնօրենն է:**

**Ներկա են գտնվել Լոս Անջելեսում Հայաստանի հյուպատոս Գրիգոր Հովհաննիսյանը, Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Հայկ Դեմոյանը, Ղարաբաղի Հանրապետության ներկայացուցիչ Ռոբերտ Ավետիսյանը:**

**Պարսումյանին ներկայացրել է բազմավաստակ երաժշտագետ-երգահան Տիգրան Մանսուրյանը: Հանդիսությունը վարել է Զավեն Խանջյանը: Ներկաները հավաքույթի վերջում վայելել են «Լարք» համույթի ելույթները:**

Հ. Ծ.

## Կալիֆոռնիա

### *Ներկայացվել է Լիզա Քիրազյանի պիեսը*

**«Փլեյռայթս պրոջեկտ»՝ դրամատուրգների ծրագրի 26-րդ թատերաշրջանի միջոցառումների շրջանակներում Սան Դիեգոյի (Կալիֆոռնիա) լիսեում-թատրոնում ապրիլի 3-10-ը ներկայացվել է Լիզա Քիրազյանի «Փոխարինում» պիեսը, տեղեկացնում է «Արմինյն միրոր սփեքթերթր» շաբաթաթերթը:**

**Պիեսը, ըստ հաղորդագրության, «բազմակողմանի թատերական ճանապարհորդություն է դեպի հոգեխնամության աշխարհը»: Դրանում հեղինակը փորձում է խորամուխ լինել որպես հոգեզավակներ մեծացած երիտասարդների կյանքի փոփոխությունների մեջ:**

**Հեղինակը՝ Լիզա Քիրազյանը, թատերագրությամբ սկսել է զբաղվել 1988-ից, երբ նրա առաջին՝ «Ոչ այն, ինչ բժիշկն է կարգադրել» պիեսը արժանացել է երիտասարդ դրամատուրգների մրցանակին: Դրանից հետո ներկայացվել են նրա 8 պիեսները, եւ հրատարակվել դրանցից երկուսը: Ներկայումս զբաղեցնում է վերոնշյալ ծրագիրը իրականացնող կազմակերպության նախագահի պաշտոնը: Նա նաեւ ակտիվորեն մասնակցում է Հարավային Կալիֆոռնիայի հայկական համայնքի գործունեություններին: «Փոխարինում» պիեսը բեմադրել է Կարրի Քլեվինը:**

Հ. Ծ.

## Փարիզում բացվել է Նինա Խեմչյանի «Պարիր ինձ հետ» ցուցահանդեսը

**Փարիզի կենտրոնում գտնվող Galerie de Buci պատկերասրահում տեղի ունեցավ հայաստանցի արվեստագետ, Երեւանի Գեղարվեստի ինստիտուտի, Փարիզի Կիրառական արվեստների ազգային դպրոցի շրջանավարտ Նինա Խեմչյանի «Պարիր ինձ հետ» խորագրի ներքո միավորված քանդակագործական եւ խեցեգործական աշխատանքների ցուցահանդեսի բացումը: Ցուցադրված էին արվեստագետի վերջին շրջանում Փարիզում կատարված աշխատանքները, որոնք արժանացան Փարիզի արվեստագիտական շրջանների եւ այցելուների հոծ խմբերի բարձր գնահատանքին:**

**Ցուցահանդեսի հովանավորությունը ստանձնել է Ֆրանսիայում Հայաստանի դեսպանությունը:**

## Դիմանկար տեղում

**Փողոցում դիմանկար անող նկարիչների մեր երկրում հազվագյուտ կհանդիպես: Իսկ աշխարհի շատ երկրներում նկարիչները բավական լավ են վաստակում անցորդներին դիմանկար անելով: Եվ ահա, Երեւանի քաղաքապետարանի «Հայարտ» մշակութային կենտրոնը կազմակերպում է իր բնույթով անդրանիկ միջոցառում «Դիմանկար տեղում» ստեղծագործական երեկո: Այսօր, մայիսի 20-ին ժամը 19.00-ից, Մաշտոցի 7ա հասցեում վեց հայտնի նկարիչներ՝ Վահե Թեւոսյանը, Վարդան Թովմասյանը, Սուքիաս Թորոսյանը, Յուրա Խաչատրյանը, Խաչիկ Հարությունյանը եւ Սերգեյ Պողոսյանն այցելուներին իրենց ցանկությամբ տեղում դիմանկար կանեն: Այդ միջոցառումը լինելով անդրանիկ, հավակնում է դառնալ ավանդական:**

Մ. ՄԱԿԱՐՅԱՆ

## Եվրոպական գրական գիշերները՝ նաեւ Երեւանում

Եվրոպայի 15 քաղաքում կկազմակերպվեն գրական գիշերներ, Երեւանը նույնպես միացել է նախաձեռնությանը:

Գրական գիշեր նախաձեռնությունը կազմակերպում են չեխական կենտրոնները EUNIC-ի (Եվրոմիության մշակութային ազգային կենտրոնների միություն) հետ համագործակցությամբ, որին այս տարի միացել է նաեւ Բրիտանական խորհրդի հայաստանյան գրասենյակը՝ ներկայացնելով «Գրականության օր» միջոցառումների շարքը:

Այս միջոցառման շրջանակում՝ մայիսի 20-ին, ժամը 12-ին Խնկո Ապոր անվան մանկական գրադարանում Մեծ Բրիտանիայի դեսպան Չարլզ Լոնսդեյլը կհանդիպի 13-14 տարեկան պատանիների հետ: Միջոցառումից հետո Բրիտանական խորհուրդը գրադարանին կտրամադրի անգլերեն գրքեր: Հաջորդ օրը՝ մայիսի 21-ին, ժամը 12-ին, «Գաֆեսճեան» արվեստի կենտրոնի ստեղծագործական սրահում պատանի ընթերցողների հետ կհանդիպեն Երեւանում Բրիտանական դեսպանատան հյուպատոս Ջենիս Լիթլը եւ դեսպանատան կցորդ Մայքլ Դրեյը: Գրական գիշեր նախաձեռնությունը նշվում է աշխարհի բազմաթիվ երկրներում՝ ներգրավվելով գրողների եւ դերասանների, քաղաքական գործիչների եւ մտավորականների: Այս ծրագրի շրջանակում տարվա մեջ մի քանի օր շարունակ մասնակից երկրներում միաժամանակ տեղի են ունենում ընթերցանությանն ու գրականությանը նվիրված միջոցառումներ՝ այսպիսով մեկ անգամ եւս կարեւորելով գրականության դերը միջմշակութային երկխոսության գործում:

**Մ. Խ.**

ԱԶԳ

## Մարզական

# Կարեն Գրիգորյանը նվաճեց գլխավոր մրցանակը



16-ամյա ՖԻԴԵ-ի վարպետ Կարեն Գրիգորյանը դարձավ Կիրիշիում անցկացված «Աշխարհի երիտասարդ աստղեր» շախմատի միջազգային 9-րդ մրցաշարի հաղթող: Ավարտական տուրում հայ պատանին հանդիպում էր իր գլխավոր հակառակորդի՝ ռուսաստանցի Յուրի Ելիսեեւի հետ, որի հետ 7 միավորով գլխավորում էր աղյուսակը: Կարենին հաջողվեց հաղթանակ տոնել նաեւ վճռորոշ պարտիայում եւ 11 հնարավորից վաստակած 8 միավորով արժանանալ մրցաշարի գլխավոր մրցանակին:

Կարեն Գրիգորյանն իրոք գերազանց դրսեւորեց իրեն այս մրցաշարում: Մեկնարկում անսպասելիորեն պարտվելով ռուսաստանցի ՖԻԴԵ-ի վարպետ Կիրիլ Ալեքսեենկոյին, Կարենը բնավ էլ չընկճվեց ու հետագա հանդիպումներում վստահ հանդես եկավ՝ տոնելով 6 հաղթանակ, 4 պարտիա ավարտելով ոչ-ոքի: Յուրի Ելիսեեւի համար Կարենից կրած պարտությունը ճակատագրական եղավ: Նա 7 միավորով զբաղեցրեց միայն 5-րդ տեղը: Լրացուցիչ գործակիցներով նրան գերազանցեցին ու մրցանակային 2-րդ եւ 3-րդ տեղերը զբաղեցրին 7-ական միավոր վաստակած ռուսաստանցի Ալեքսեյ Գոգանովն ու ադրբեջանցի Ուլվի Բաջարանին: Գոգանովը 11-րդ տուրում ոչ-ոքի խաղաց Կիրիլ Ալեքսեենկոյի հետ, իսկ Բաջարանին հաղթեց իր հայրենակից Զաուր Մամադովին:

Վանյա Սոմովի հիշատակին նվիրված «Աշխարհի երիտասարդ աստղեր» մրցաշարն անցկացվում է 2003-ից: Տարբեր տարիների այդ մրցաշարում հանդես են եկել հայ շախմատիստներ, սակայն նրանցից ոչ մեկին չի հաջողվել հաղթող ճանաչվել: Մինչեւ Կարեն Գրիգորյանի հաջողությունը, բոլորից հաջող էր հանդես եկել Զավեն Անդրեասյանը, որը 2007-ին 11 հնարավորից վաստակած 7 միավորով գրավել էր 4-րդ տեղը: Նույն մրցաշարում հանդես եկած Անդրանիկ Գրիգորյանն այդ տարի 6 միավորով բաժանել էր 5-6-րդ տեղերը: 2006-ին Ռոբերտ Հովհաննիսյանը 5 միավորով բաժանել էր 8-9-րդ տեղերը: Անցյալ տարի Հայաստանը ներկայացրած գրոսմայստեր Սամվել Տեր-Սահակյանը 7 միավորով գրավել էր 5-րդ տեղը: Իսկ ահա բոլորից անհաջողը 2008-ին Ռոբերտ Աղասարյանի ելույթն էր, որը 2,5 միավորով 10-11-րդ տեղերն էր բաժանել: Հայ շախմատիստների ելույթների ֆոնի վրա Կարեն Գրիգորյանի հաղթանակն ավելի է արժեւորվում:

2003-ին անցկացված անդրանիկ մրցաշարի հաղթողը Յան Նեպոմնյաչչին էր: Նա այդ հաջողությունը կրկնեց 2007-ին: 2004-ին հաղթող ճանաչվեց Իլդար Խայրուլինը: Հետագա տարիներին հաջողությունն ուղեկցել է Սերգեյ Կարյակինին, Իվան Պոպովին, Ալեքսանդր Շիմանովին, Դանիլ Դուբովին եւ Յարոսլավ Ժերեբուխին:

# «Պորտոն» եվրոպական գավաթների մրցաշարերում 7-րդ տիտղոսը շահեց



**Պորտուգալական «Պորտոյի» ֆուտբոլիստները դարձան Եվրոպայի լիգայի գավաթակիրներ: Դուբլինում կայացած եզրափակիչ խաղում «Պորտոն» 1-0 հաշվով առավելության հասավ պորտուգալական մեկ այլ ակումբի՝ «Բրագայի» նկատմամբ: Եզրափակիչ հանդիպման ելքը վճռեց Եվրոպայի լիգայի ընթացիկ խաղարկության լավագույն ռմբարկու, կոլումբիացի հարձակվող Ֆալկաոյի խփած միակ գոլը, որը նրա 17-րդ գնդակն էր մրցաշարում:**

**Խաղից հետո թիմերի մարզիչները հետեւյալ կարծիքն արտահայտեցին:**

**Անդրե Վիլաշ-Բոաշ** **(«Պորտո»)- Սա վիթխարի հաջողություն էր «Պորտոյի» համար: Մենք ապացուցեցինք, որ իրոք բարձրակարգ թիմ ենք: Հենց այս մրցանակն էինք մենք ցանկանում բոլորից շատ նվաճել, նույնիսկ զգում էինք, որ պարտավոր ենք այն շահել: Խաղից առաջ մեզ էին հաղթողի գլխավոր հավակնորդ համարում, սակայն այսօր «Բրագան» դրսեւորեց իր բարձր կարգը: Բավական է միայն հիշատակել, թե ինչպիսի թիմերի է «Բրագան» հաղթել եվրոգավաթների մրցաշարում: Դա վկայում է այն մասին, որ «Բրագան» բարձրակարգ թիմ է ու հանձին Դոմինգուշ Պասիենսիայի հիանալի մարզիչ ունի: Շատ ափսոս, որ այսօրվա խաղը դիտարժան չստացվեց: Մեր բախտը բերեց, որ մինչեւ ընդմիջում բացեցինք հաշիվը, որի շնորհիվ 2-րդ խաղակեսում ավելի բաց ֆուտբոլ ընթացավ: Այս հաղթանակը ցանկանում եմ նվիրել իմ մարզչական շտաբին, ֆուտբոլիստներին ու թիմի երկրպագուներին: Շնորհակալ եմ նաեւ Ժոզե Մոուրինյուին, Խոսեպ Գվարդիոլային ու Բոբի Ռոբսոնին: Պորտոն իմ հարազատ քաղաքն է, որի թիմով պետք է հպարտանալ: Մենք հերթական տիտղոսը նվաճեցինք եւ իրավունք ստացանք վիճարկելու Եվրոպայի սուպերգավաթը:**

**Դոմինգուշ Պասիենսիա** **(«Բրագա»)- Բնականաբար շատ հիասթափված եմ, քանի որ չհաջողվեց իրականացնել ծրագրվածն ու հասնել նպատակին: Խաղի ելքը վճռեցին չնչին դետալները, մասնավորապես 4 դրվագները՝ ներառելով Ֆալկաոյի գոլն ու Մոտորոյի գոլային պահը, որն ընդմիջումից անմիջապես հետո կարող էր վերականգնել հավասարակշռությունը: Դա կփոխեր խաղի ընթացքը: Տխուր է հրաժեշտ տալ մի թիմի, որի հետ 2 տարի աշխատել ես եւ ուրախության պահեր ես ապրել: Սակայն ժամանակն է հրաժեշտ տալ ակումբին: Հուսով եմ, որ «Բրագան» կածի եւ ավելի ուժեղ ակումբ կդառնա: Իհարկե, ցավալի է պարտվելը, սակայն հպարտանալու առիթ ունենք: Այս մրցաշրջանում 19 խաղ ենք անցկացրել եվրոգավաթներում, ինչը վկայում է մեր ուժի մասին: Մենք ապացուցեցինք, որ եթե բարձր նպատակներ ես դնում ու հավատում ես դրանց իրագործմանը, ապա կարելի է հեռուն գնալ:**

**Նշենք, որ «Պորտոյի» գլխավոր մարզիչ Անդրե Վիլաշ-Բոաշը դարձավ եվրոպական գավաթների մրցաշարերում գավաթակիր թիմ պատրաստած ամենաերիտասարդ մարզիչը: Եզրափակիչ խաղի օրը նա 33 տարեկան 213 օրական էր: Նա գերազանցեց «Չելսիի» գլխավոր մարզիչ Ջանլուկա Վիալլիի ռեկորդային ցուցանիշը, որը 1997/98-ի մրցաշրջանում 33 տարեկան 308 օրականում իր թիմի հետ նվաճել էր գավաթակիրների գավաթը:**

**1893-ին հիմնադրված «Պորտոն» եվրոպական մրցաշարերում 7-րդ տիտղոսը նվաճեց: Թիմը նախկինում 2 անգամ (1987, 2004-ին) դարձել է չեմպիոնների գավաթակիր, նույնքան անգամ (1987, 2004-ին) նվաճել է միջմայրցամաքային գավաթը, 1987-ին արժանացել է Սուպերգավաթին, իսկ 2003-ին՝ ՈՒԵՖԱ-ի գավաթին: Եվրոպական մրցաշարերում թիմի լավագույն ռմբարկուն կոլումբիացի Ֆալկաոն է, որը խփել է 22 գնդակ: Դրանցից 17-ը նա խփել է Եվրոպայի լիգայի ընթացիկ խաղարկությունում՝ սահմանելով արդյունավետության յուրօրինակ ռեկորդ: Նախկին լավագույն ցուցանիշը պատկանում էր Մյունխենի «Բավարիայի» նախկին հարձակվող Յուրգեն Քլինսմանին, որը ՈՒԵՖԱ-ի գավաթի 1995/96-ի խաղարկությունում 15 գոլ էր խփել:**

# Առաջին պարտիան ոչ-ոքի ավարտվեց

Երեկ Կազանում մեկնարկեց շախմատի աշխարհի չեմպիոնի տիտղոսի հավակնորդների մրցաշարի եզրափակիչ մրցախաղն Ալեքսանդր Գրիշչուկի եւ Բորիս Գելֆանդի միջեւ: Առաջին պարտիայում, որում սպիտակներով խաղում էր Գրիշչուկը, 49-րդ քայլին մրցակիցները հաշտություն կնքեցին:

Մրցակարգի համաձայն, մրցակիցները դասական շախմատի 6 պարտիա պետք է անցկացնեն: Եթե հաղթողը չորոշվի, ապա հարկ կլինի անցկացնել լրացուցիչ մրցախաղ: Հիշեցնենք, որ այս մրցախաղի հաղթողն իրավունք կստանա շախմատային թագը վիճարկելու աշխարհի չեմպիոն Վիշվանաթան Անանդի հետ: Այսօր կկայանա 2-րդ պարտիան, որում սպիտակներով կխաղա Բորիս Գելֆանդը:

### ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐ

# Մրցավարների սխալից ամենաշատը տուժեց «Գանձասարը»

**Կապանում մայիսի 15-ին տեղի ունեցած «Գանձասար»-«Փյունիկ» հանդիպման ժամանակ եւ խաղից հետո դաշտի տերերի ֆուտբոլիստները դժգոհելով մրցավար Արման Ամիրխանյանի եւ նրա օգնականների գործողություններից, հայհոյանքներ ու խուլիգանական արարքներ են թույլ տվել նրանց նկատմամբ: Դժգոհության հիմնական պատճառը 82-րդ րոպեին «Գանձասարի» խփած 2-րդ գոլը չհաշվելն էր:**

**ՀՖՖ կարգապահական կոմիտեն քննարկելով Կապանում տեղի ունեցած միջադեպը, որոշել է սեփական հարկի տակ կայանալիք առաջիկա 5 հանդիպումներն անցկացնել առանց հանդիսականների: «Գանձասար» ակումբը տուգանվել է 150 հազար դրամ: Նիստում նշվել է, որ ընթացիկ մրցաշրջանում սա արդեն «Գանձասար» մարզադաշտում տեղի ունեցած երկրորդ միջադեպն է: Ակումբի ղեկավարությունը զգուշացվել է, որ նման միջադեպի կրկնվելու դեպքում «Գանձասարի» եւ մարզադաշտի նկատմամբ կկիրառվեն ավելի խիստ պատժամիջոցներ:**

**ՀՖՖ մրցավարական կոմիտեն էլ իր հերթին քննարկել է այդ խաղում մրցավարների գործողություններն ու համապատասխան որոշումներ է կայացրել: Դիտելով «Գանձասար»-«Փյունիկ» հանդիպման տեսագրությունը, մրցավարական կոմիտեն արձանագրել է, որ 82-րդ րոպեին, երբ «Փյունիկը» հաղթում էր 2-1 հաշվով, չեմպիոնի դարպասը խփված գոլի ժամանակ «խաղից դուրս» վիճակ չի եղել: Մինչդեռ մրցավարի օգնական Արթուր Մուրադյանն արձանագրել է «խաղից դուրս» վիճակ եւ գոլը չի հաշվվել: Նրա գնահատականը 8,4-ից իջեցվել է 5,9-ի, իսկ մրցավարը որակազրկվել է բարձրագույն խմբի 3 խաղով:**

**Նաեւ փաստվել է, որ գլխավոր մրցավար Արման Ամիրխանյանն անհիմն կերպով դեղին քարտեր է ցույց տվել «Գանձասարի» խաղացողներ Արսեն Ավետիսյանին ու Արա Խաչատրյանին: Դրա համար նրա գնահատականը 8,4-ից իջեցվել է 6,9:**

**Այսպիսով, իրավացի էր «Գանձասարի» գլխավոր մարզիչ Աբրահամ Խաշմանյանի դժգոհությունը մրցավարներից: Նա խաղից հետո նշել էր, որ գոլը խփել են առանց խաղի կանոնների խախտման: Փաստորեն, մրցավարների սխալի հետեւանքով ամենաշատը տուժեց «Գանձասարը», որն առաջնությունում անդրանիկ պարտությունը կրեց՝ կորցնելով թանկարժեք միավորներ:**

# Ըմբիշները նախապատրաստվում են պատասխանատու մրցումներին

**Ըմբիշների համար ընթացիկ մրցաշրջանի գլխավոր ստուգատեսը սեպտեմբերի 12-18-ը Ստամբուլում կայանալիք աշխարհի առաջնությունն է, որտեղ բացի մեդալներից, կխաղարկվեն նաեւ 2012-ի Լոնդոնի ամառային օլիմպիադայի ուղեգրերը: Պատասխանատու այդ մրցաշարին լրջորեն են նախապատրաստվում նաեւ հայ ըմբիշները:**

**Այս օրերին հունահռոմեական ոճի ըմբշամարտի Հայաստանի ազգային հավաքականն օլիմպիական չեմպիոն Լեւոն Ջուլֆալակյանի գլխավորությամբ Ծաղկաձորում հերթական ուսումնամարզական հավաքն է անցկացնում: Մեր ըմբիշները նախապատրաստվում են Մարիուպոլում առաջիկայում կայանալիք միջազգային մրցաշարին:**

**Ազատ ոճի ըմբշամարտի հավաքականի հիմնական կազմը գլխավոր մարզիչ Արայիկ Բաղդադյանի գլխավորությամբ մայիսի 27-29-ը Մախաչկալայում կմասնակցի «Գրան պրիի» մրցաշարին, իսկ հունիսի 5-7-ը Թբիլիսիում հանդես կգա «Գոլդեն Գրան պրի» մրցաշարում: Մեր թիմի կազմում այդ մրցաշարերին վնասվածքի պատճառով չեն մասնակցի Էդգար Ենոքյանն ու Արթուր Առաքելյանը:**

# Շիրերի մոմե արձանը տեղադրվեց Մադամ Տյուսոյի թանգարանում



Անգլիայի հավաքականի եւ «Նյուքասլի» նախկին հարձակվող Ալան Շիրերն այլեւս կարիք չի ունենա հայելու մեջ նայելու: Նա կարող է այցելել Բլեքպուլում գտնվող Մադամ Տյուսոյի հանրահայտ թանգարանն ու հիանալ մոմե իր արձանով, որն օրերս է տեղադրվել: Այստեղ են տեղադրված նաեւ իր նախկին խաղընկերների՝ Դեւիդ Բեքհեմի եւ Ուեյն Ռունիի մոմե արձանները:

Այցելելով թանգարան ու նայելով իր մոմե արձանին, Շիրերը պարզապես ապշած էր մնացել. «Դա պարզապես զարմանալի ու անհավատալի է, թե որքան բնական է ստացվել արձանը: Պարզապես ապշած եմ: Հուսով եմ, որ թանգարանի այցելուներն ըստ արժանվույն կգնահատեն կատարված աշխատանքը: Ինձանից վերցրել էին մարմնիս բոլոր չափսերը, նույնիսկ հոնքերիս միջեւ եղած հեռավորությունը: Եվ այդ ամենի համար պահանջվել էր ընդամենը մեկ օր»:

# Պեպեն ու Ռամոսը երկարաձգեցին պայմանագրերը

Մադրիդի «Ռեալը» երկարաձգել է պայմանագրերը Սերխիո Ռամոսի եւ Պեպեի հետ: Ռամոսն ակումբի հետ պայմանագիր է կնքել մինչեւ 2017-ը, իսկ Պեպեի «Ռեալում» խաղալու ժամկետը կավարտվի 2016-ին:

Պեպեն «Ռեալի» հիմնական կազմի ֆուտբոլիստներից ամենացածր վարձատրվողն էր: Նոր մրցաշրջանում նրա աշխատավարձը 1,8 մլն դոլարից կհասնի տարեկան 3,8 մլն-ի: Իսկ Սերխիո Ռամոսը 3,5 մլն դոլարի փոխարեն 4,5 մլն կստանա:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԾՈՎԱՐՇԱՎ

# Հանդիպումներ Սիդնեյում

*2-րդ էջից*

...Սիդնեյում ապրում է ավելի քան չորսուկես միլիոն մարդ: Քաղաքի բնակչությունն են ներկայացնում ավելի քան երկու հարյուր ազգություններ: Դա պատկառելի թիվ է: Նրանք բոլորը տարբեր մշակույթների կրողներ են: Հասկանալի է, որ երկրի կառավարությունում Ազգային փոքրամասնությունների կոմիտեն ղեկավարում է մեր հայրենակից Ստեփան Գրքաշարյանը: Ռեպորտաժներից մեկում ես պատմել էի Ստեփանի մասին: Կարող եմ միայն ավելացնել, որ ամենից շատ մտահոգված է նրանով, թե ինչպես է տարեցտարի խորանում պառակտումը հայ համայնքում: Եվ դա ունի իր ոչ միայն օբյեկտիվ պատճառները: Չէինք հասցրել, այսպես ասած, խարիսխ գցել, երբ անընդհատ սկսեցին պատմել, թե ինչ հույսերով են դիմավորել ու ճանապարհել ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանին, որի վերջերս Սիդնեյ կատարած այցելությունը պարզապես ցնցող էր: Քառասուն հազար հայրենակիցներ ունենք այստեղ: Բայց ո՛չ դեսպանատուն, ո՛չ հյուպատոսարան: Չի գործում պատվավոր հյուպատոսի ինստիտուտը: Կա մի ինչ-որ որբություն, քանզի հենց նրանք, ովքեր ըստ տրամաբանության, պետք է համախմբեին համայնքը, պառակտում են այն: Նման հարցերով, թվում է, մենք չպետք է զբաղվենք: Սակայն լռելն էլ բարոյական չէ:

...Սեփական փորձից գիտեմ՝ բավական է հուշատետրից քաղած մեկ տող, որպեսզի սկսեմ մի ամբողջ թեմա արծարծել: Բայց պատահում է եւ այնպես, որ դուրս են մնում մանրամասն գրված էջեր՝ հետաքրքրական սյուժեներով, մարդկանցով, երեւույթների բնորոշմամբ: Բանն այն է, որ ճամփորդական նոթերի ժանրը բարդ ու ծանր գործ է: Մի կողմից, պետք է ընդգրկել ամբողջ երեւույթներ՝ բնական, մարդկային, պատմական, քաղաքական, պետական եւ այլն, եւ այլն, մյուս կողմից էլ պետք է տեղավորվել ռեպորտաժի խիստ ու ժլատ շրջանակներում: Եվ հույս էլ չեմ տածում, թե այ, երբ տուն վերադառնանք, ձեռագրերով լի ճամպրուկներս կհավաքեմ (տանը դրանք իրենց ճամպրուկների մեջ են. շատերն արդեն հանձնել եմ պետարխիվ), կնստեմ ու հանգիստ գիրք կգրեմ: Ո՛չ մի նման բան: Գիրքը գրվում է հենց հիմա, հենց այս փոքրիկ նավախցում, որտեղ գրամեքենայի սեղանիկի եւ պատին ամրացված գրադարակների պատճառով տեղաշարժվում եմ միայն կողքանց: Գրքի վրա տանն աշխատելը շքեղություն է, երբ կարող ես վարսավիր-դիմահարդարի պես պտտվել նյութիդ շուրջը, այստեղ մի գույն ու երանգ ավելացնել, այնտեղ՝ մկրատել տեքստդ կրկնություններից՝ ավելորդ մազափնջիկների նման:

Հավանաբար ընթերցողի մեջ հարց ծագի. «Ինչո՞ւ է ասվում այս ամենը»: Անկեղծ ասած, խոսքն արդեն իմ մասին չէ: Խոսքն ապագա ճանապարհորդ-տարեգիր հայրենակցիս մասին է: Այո՛, նման մարդիկ պետք է որ լինեն մեզանում: Մեր ցավի պես հարազատ Սփյուռքը, առանց որի այսօր չկա Հայաստան, չկա հայություն, դեռեւս երկար է գոյատեւելու: Դա բարդագույն, բազմադեմ, բազմալեզու, բազմաշխարհագրական, բազմամշակութային, բազմապատմական, բազմատարիք, բազմաբնույթ, բազմաչափ ու հակասական եւ այդ իսկ պատճառով, միասնական հայ-քրիստոնյա-առաքելական երեւույթ է: Եվ այս ողջ բազմազանությունը ինքնին անխուսափելիություն է: Նշանակում է, ցանկանում ենք, թե ոչ, պետք է համակերպվել եւ գործել, հաշվի առնելով խնդրի յուրահատկությունը:

Մեզ համար այլեւս պետք է անհանդուրժելի լինի այն փաստը, որ ծնողներն իրենց երեխաներին չեն տալիս այս կամ այն դպրոցը, որտեղ, տեսեք-տեսեք, Դաշնակցության կամ Հայ դատի գաղափարներ են տարածվում: Չի կարելի հանդուրժել եւ այն, որ նույնիսկ Ցեղասպանության օրն են միմյանցից անջատ նշում, որ նույնիսկ սեփականացրել են Վարդանանց տոնը, որ սահմաններ են գծված Բարեգործականի եւ Համազգայինի հնարավորությունների միջեւ: Հազարավոր գրառումներ ունեմ հուշատետրերումս, որոնք պարզապես չեմ կարող ինձ թույլ տալ հրապարակել: Առավելեւս, երբ խոսքը նաեւ եկեղեցու մասին է: Սակայն մի բան գիտեմ՝ քառասունհազարանոց համայնքին անհրաժեշտ է հայաստանյան ինստիտուտ: Կրկնում եմ՝ թեկուզ իդեմս պատվավոր հյուպատոսի: Վերջիվերջո պետք չէ մոռանալ, որ Սփյուռքի բնակչությունը համարյա երեք անգամ ավելի է, քան Հայաստանի Հանրապետության եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչությունը: Մի խոսքով, խնդիրներ, խնդիրներ... Եվ դրանց մասին են պատմում իմ բոլոր հուշատետրերը: Որպես ավարտ մեջբերեմ միայն մեկ գրառում. «Դեռ ոչ շատ վաղուց Ավստրալիայում գրանցված երկու հարյուր համայնքներից ամենակազմակերպվածը հայկականն էր: Այսօր ամենախնդրահարույցներից մեկը... հայկականն է»: Սա վերցված է կյանքից: Բայց գիտեմ, որ պետք չէ խուճապի մատնվել: Ներուժը հսկայական է: Պարզապես պետք է հաշվի առնել, որ Համազասպյանի ժամանակները անցյալում են, անդարձ հեռացել են (Վարդգես Եղիշի Համազասպյանը երկար տարիներ արտասահմանյան հայերի հետ կապերի Կոմիտեի նախագահն էր): Հիմա բոլորովին այլ մոտեցում է պետք: Փառք Աստծո, մի ամբողջ Սփյուռքի նախարարություն ունենք:

...Ավանդաբար մի քանի խոսք՝ Ավստրալիայի մասին: Այստեղ քաղաքացու անհարգելի պատճառով ընտրություններին չներկայանալը պատժվում է տուգանքով: Երկրում ծայրաստիճան արագ բազմացող ճագարներին ստիպված են եղել վերացնել հատուկ վիրուսով: Դեռեւս 1866 թվականին Ավստրալիա են բերվել նաեւ ընդամենը հարյուր ուղտեր՝ երեսուն ուղտապահների հետ: Ապրում էին իրենց համար ազատ, արածում մի ողջ մայրցամաքի ընդարձակ լայնություններում: Եվ հիմա նրանց քանակն անցել է մեկ միլիոնից: Ահռելի խնդրի առջեւ են կանգնած:

Դեռ Մելբուռնից առաջ ես ռեպորտաժում գրել էի, որ Ավստրալիան տարածքով աշխարհում զբաղեցնում է վեցերորդ տեղը, իսկ բնակչության թվով՝ հիսուներկուերորդ: Հետաքրքրական էր իմանալ, թե բնակչության եւ տարածքի առումով որ երկրներն են առաջին վեցնյակում: Դա՝ արդեն հերթական ռեպորտաժի համար, երբ լինենք Ինդոնեզիայում, որն, ի դեպ, աշխարհում չորրորդն է բնակչության թվով: Իսկ այժմ այն մասին, թե ինչ հարաբերականության մեջ է ջրածածկույթը (խմելու) երկրի մակերեսի հետ: Ավստրալիան ունի ընդամենը մեկ տոկոս ջրային մակերես: Խնդիր կա: Եվ ես իմացա, թե ինչպես են նրանք լուծում այդ խնդիրը: Միայն շնորհիվ խիստ օրենքի, որը խստիվ պահպանվում է: Գոյություն ունեն ջրի օգտագործման դարձյալ խիստ, պաշտոնական սահմանափակումներ: Օրենքն այդպես էլ կոչվում է՝ «Ջրային արգելանք»: Եվ գրված է խելացի կերպով: Օրինակ, անձրեւների սեզոնի սկսվելուն պես օրենքի մեղմացում է տեղի ունենում: Իսկ մնացած ժամանակ հստակ գործում են ավտոմեքենա լվանալու, ջրավազանները լցնելու, սիզամարգերը եւ տնամերձերը ջրելու արգելքները:

...Ինչպես որ մեզ դեռ վաղուց խոստացել էին, Ավստրալիայում գտնվելու մեր կարճ ժամանակահատվածում հայկական հարսանիք է տեղի ունենալու, որին Բաբասն ու Հայկը, հարս ու փեսայից եւ, իհարկե, քավորից հետո, գլխավոր գործող անձինք են լինելու: Իսկ մենք՝ մյուսներս, ընդամենը մի փոքր կհանգստանանք:

ԶՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ
Սիդնեյ

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կարիքների համար հայտարարվում է պարզեցված ընթացակարգով մրցույթ:

Գնման առարկա է հանդիսանում տպագրության աշխատանքները:

Լրացուցիչ ինֆորմացիա կարող եք ստանալ ՀՀ ֆինանսների նախարարության www.gnumner.am պաշտոնական կայքից և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից՝ 58-07-80 հեռախոսահամարով:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ամերիկյան դեսպանատունը կազմակերպում է գրասենյակային ու բնակարանային կահույքի, մեքենաների, համակարգիչների և այլ ապրանքների աճուրդային վաճառք, որը տեղի կունենա մայիսի 21-ին Ամերիկյան փողոց 1 հասցեում ժամը 10-19-ը: Ապրանքները կարող եք զննել տեղում վաճառքին նախորդող ուրբաթ օրը, մայիսի 20-ին ժամը 10-19-ը: Զննումն անվճար է:

Մանրամասն տեղեկությունների համար կարող եք այցելել www.usa.am էջի հայտարարությունների բաժինը:

**Տեղադրեք եւ ընթերցեք անվճար հայտարարություններ www.vdv.am կայքում**

## ԿԱՐԳ

### «Մենք եղել ենք, մենք կանք, մենք կլինենք» խորագրով

**ուսանողների եւ աշակերտների համար անցկացվող «Երիտասարդությունը եւ Հայաստանի ապագան» թեմայով լավագույն գրական ստեղծագործության VII միջազգային մրցույթի**

*(Մրցույթը նվիրվում է Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակին)*

**1. Ընդհանուր դրույթներ**

Ներկա դրույթները որոշում են «Մենք եղել ենք, մենք կանք, մենք կլինենք» խորագրով ուսանողների եւ աշակերտների համար անցկացվող VII միջազգային մրցույթի նպատակն ու խնդիրները, ինչպես նաեւ նրա անցկացման կարգը:

Մրցույթի թեման է «**Երիտասարդությունը եւ Հայաստանի ապագան**»:

Մրցույթն անց է կացվում «Ռուսաստանի հայերի միություն» համառուսաստանյան հասարակական կազմակերպության, «Համաշխարհային հայկական կոնգրես» հայկական հասարակական կազմակերպությունների միջազգային միության կողմից՝ ՀՀ Սփյուռքի նախարարության, ՀՀ կրթության եւ գիտության նախարարության հետ համատեղ:

Մրցույթն անցկացվում է 2011 թվականի **ապրիլի 1-ից մինչեւ հունիսի 15-ը**:

Մրցույթի արդյունքները կիրապարակվեն 2011 թ. սեպտեմբերին, իսկ հաղթողների պարգեւատրման պաշտոնական արարողությունը կկայանա հոկտեմբերին՝ «Ռուսաստանի հայերի միության եւ Համաշխարհային հայկական կոնգրեսի օրերը Հայաստանում եւ Արցախում»-2011 ծրագրի շրջանակներում:

**2. Մրցույթի նպատակն ու խնդիրները**

Մրցույթի նպատակն է նպաստել ներկա իրավիճակում հայ ժողովրդի համար բացառիկ գերակայություն ունեցող հիմնահարցի՝ հայոց պետականության պահպանման, անկախ Հայաստանի ամրապնդման եւ հզորացման գործում հայ երիտասարդության ջանքերի միավորման, նրանց ակտիվության բարձրացման գործընթացի արագացմանը:

Մրցույթն իր բնույթով նպատակ է հետապնդում նաեւ արդի հայ երիտասարդ սերնդի մեջ սերմանելու հայրենասիրական ոգի, հայրենիքին ծառայելու պատրաստակամություն, հպարտության զգացում Հայաստան երկրի հանդեպ:

Մրցույթի մասնակիցը ներկայացված աշխատանքում պետք է փորձի ցույց տալ երիտասարդության տեղն ու դերը Հայաստանի զարգացման, հզորացման, հայոց պետականության ամրապնդման գործում: Աշխատանքում պետք է հստակորեն երեւա մրցույթի մասնակցի վերաբերմունքը մեր քսանամյա երիտասարդ հանրապետության ապագայի նկատմամբ, թե ինչպիսին է նա տեսնում Հայաստանի վաղվա օրը եւ իր տեղը Հայաստան երկրի ապագայի կերտման գործընթացում:

Ներկայացված աշխատանքում պետք է շեշտադրվի այն միտքը, որ առանց միասնության, առանց ջանքերի միավորման չենք կարող արդյունավետ լուծել Հայաստանի խնդիրները, դիմակայել նոր հազարամյակի կողմից մեր գոյությանը նետված մարտահրավերներին:

**3. Մրցույթի պայմաններն ու մասնակիցները**

Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի, Արցախի եւ հայկական սփյուռքի ուսանողներն ու դպրոցների բարձր դասարանցիները, ինչպես նաեւ այլազգի երիտասարդ ներկայացուցիչներ:

Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի մրցույթին մասնակցել մեկ ստեղծագործությամբ, որը կարող է լինել շարադրություն, բանաստեղծություն, պատմվածք, հրապարակախոսական ակնարկ եւ այլն:

Մրցույթին մասնակցելու իրավունք են ստանում թեմային եւ նշված ծավալին համապատասխանող աշխատանքները:

**4. Մրցույթի կազմակերպման կարգը**

Մրցույթը ղեկավարելու նպատակով ձեւավորվել է Կազմկոմիտե, որը որոշում է մրցույթի անցկացման ժամկետները, կարգը, ձեւավորում մրցութային հանձնաժողով, հաստատում նրա կազմը եւ ամփոփում արդյունքները:

Մրցութային հանձնաժողովը

▼ մշակում է աշխատանքների գնահատման չափանիշները,

▼ սահմանում է մրցանակային տեղերը եւ անվանակարգերը,

▼ ստուգում եւ գնահատում է աշխատանքները,

▼ որոշում է հաղթողներին եւ ներկայացնում Կազմկոմիտեի հաստատմանը:

Ուղարկված աշխատանքները չեն վերադարձվում:

Մրցույթի Կազմկոմիտեն իրեն իրավունք է վերապահում անհրաժեշտության դեպքում համապատասխան փոփոխություններ կատարել մրցույթի անցկացման կարգում:

Մրցույթի արդյունքները ուսանողների եւ աշակերտների համար կամփոփվեն առանձին-առանձին:

**5. Հաղթողների պարգեւատրումը**

Մրցույթում առաջին երեք տեղերը շահած ուսանողները, ինչպես նաեւ աշակերտները կպարգեւատրվեն արժեքավոր նվերներով եւ դիպլոմներով, իսկ առանձին անվանակարգերում հաղթողները՝ նվերներով եւ պատվոգրերով: Լավագույն աշխատանքները կիրատարակվեն առանձին ժողովածուով:

**6. Մրցութային աշխատանքին ներկայացվող պահանջները**

Մրցութային աշխատանքները պետք է ներկայացնել մինչեւ 2011 թվականի հունիսի 15-ը: Հայաստանից եւ Արցախից ներկայացված աշխատանքներն ընդունվում են միայն հայերեն լեզվով, իսկ մերձավոր եւ հեռավոր արտերկրերից ներկայացվող աշխատանքները կարող են լինել հայերեն, ինչպես նաեւ ռուսերեն կամ անգլերեն լեզուներով:

Ներկայացված աշխատանքների ծավալը չպետք է գերազանցի համակարգչային 4 էջի սահմանը:

Աշխատանքները ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով (Word ֆորմատով, վերին եւ ստորին լուսանցքները՝ 2, աջ եւ ձախ լուսանցքները՝ 2.5, կարմիր տողը՝ 1.25, տպատառի չափը՝ 14 pt, ինտերվալը՝ 1): Աշխատանքները կարող են ներկայացվել նաեւ անձամբ կամ ուղարկվել փոստով:

Տիտղոսաթերթի վրա պարտադիր է նշել՝

- Ազգանուն
- Անուն
- Հայրանուն
- Ծննդյան թիվը
- Հասցեն
- Հեռախոսը
- Էլեկտրոնային փոստի հասցեն
- Ուսումնական հաստատության անվանումը, վայրը, հասցեն եւ հեռախոսի համարը

Աշխատանքնեը կարող են ներկայացվել Մրցույթի կազմակերպչի հասցեով՝

**Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության հայաստանյան մասնաճյուղ**

ք.Երեւան, Տերյան 69:
Հեռ. (37410) 51 04 42
(37410) 51 04 43
Ֆաքս (37410) 51 04 41
Էլ. փոստ՝ **vladis@netsys.am**

կամ

**ՀՀ Կրթության եւ գիտության նախարարություն**
Հայաստանի Հանրապետություն, Երեւան, Գլխավոր պողոտա, Կառավարության III շենք, 611 սենյակ
Էլ. փոստ՝ **kgnhanrakrtutun@mail.ru**

*Մրցույթի կազմկոմիտե*

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 19.5.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: